



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՏՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1885 ԱՄԻՆ

ՆԻՍԱՏ

5 ՅՈՒՆԻՍ 1885



Կ. ՊՕԼԻՍ

1885

ԴԻԻՄՈՒՄ ԱՁԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱՅ

ՄԱՅԲ ԴԻԻՄՆ

Տիգրան	Էֆէնտի	Եղևուֆեան	Ա. Արենապետ
Յովհաննէս	»	Թորոսեան	Բ. »
Յարութիւն	»	Թլրեաբեան	Գ. »
Յակոբ	»	Գուրգէն	Ա. Արենապետ
Ստեփան	»	Տամատեան	Բ. »
Միհրան	»	Տէօբմէճեան	Գ. »

Ձեռնաստրեան Դիւան

Մատթէոս Եպիս. Իզմիրլեան Արենապետ
 Գարեգին Վարդապետ Թաթարեան
 Միքայէլ Էֆէնտի Մամիկոնեան

Դաստիարակութեան Դիւան

Գարրիէլ Էֆ. Նորատունկեան Արենապետ
 Դասպար » Դասպարեան
 Մկրտիչ » Մէլգուրեան

Կարևածոց Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արենապետ
 Միհրան » Զօպանեան
 Նշան » Պօյաճեան

Համարակարգեան Դիւան

Գառնիկ Էֆ. Յովակիմեան Արենապետ
 Կարապետ » Սըվաճըրեան
 Մկրտիչ » Ճանըմեան

Յարաբերութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Նուրեան Արենապետ
 Համբարձում » Մաղպուլեան
 Ռէթէոս » Պէրպէրեան

Նախաձեռնութեան Դիւան

Յարութիւն Էֆ. Մէրեէմ Գուլի Արենապետ
 Յակոբ » Պօշնաբեան

Իրաւասութեան Դիւան

Յովհաննէս ՔՆԵ. Մկրեան Արենապետ
 Յակոբ Էֆէնտի Արշակ
 Ղալար » Հովուեան

Խմբագրութեան Դիւան

Կարապետ Էֆ. Խթիմեան Արենապետ
 Մկրտիչ » Մէլլիբեան
 Համբարձում » Ալաճաճեան

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1885 ԱՄԻ

ՆԻՍՏ Ե.

5 ՅՈՒԼԻՍ 1885

ՆԱԽԱԳԱՀ . — Սրբազան Պատրիարք Հայր .
ԱՏԵՆԱՊԵՏ . — Տիգրան Էֆէնտի Երուսփեան .

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական գործողութիւնք .
- Բ. — Տեղեկագիր Եւրոպական Յանձնաժողովոյ . (Մրազիր Կեդր. Ուղղակի տրոյց և Եւրոպոյց 1885-86 ամի Աղգային Կեդր. Մնտուկի) .
- Գ. — Տեղեկագիր Աղղ. Վարչութեան ի մասին Երուսաղէմի պարտուց բարձման խնդրոյ .
- Դ. — Տեղեկագիրք Նախաձեռնութեան և Համարակալութեան Դիւանաց վասն Հաստատման մի ընծայարանի .

Ընդ Նախադասութեամբ Ամեն Ս. Պատրիարք Հօր , Ատենապետ Էֆէնտի Ատենաք հը բանոց ժամը Յին Ի ներկայութեան ՅՏ Երեւոյիսանոց , որոց թիւն ի վերջէ Էջի հը յանգի :

Եւ որովհետև Ժողովոյ Բ. և Գ. Ատենաք պիրք տակաին ներկայ էին , Ատենապետ էֆի հրաւիրմամբ , Երեւոյիսաններէն Նշան Էֆէնտի Գարաջաշեան կանցնի ի Դիւան և հը վարէ Երկրորդ Ատենաք պիր պաշտօնն :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԲ

1.

Բացակայութիւն

Երեւոյիսաններէն Պաւլուրեան Ռուբէն Էֆէնտի անձնական տիրութեամբ ծաղովս յ

այսօրեայ նիստէն բացակայ մնալն զրով հա-
զրբզած լինելով Գիւանին , Ատենապետ էֆէն-
տի նորա անունն , իբր օրինաւոր բացակայ ,
արձանագրել կուտայ ներկայութեան տուճա-
րին մէջ :

2.

Երեսփոխանական հրաժարագիր Յ. ԷՅԵՆՈՒԻ
Ազնաւորեանի .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Մեր պաշտօնակիցնե-
րէն Ազնաւորեան Յովհաննէս էֆէնտի մէկ
զիրէ կայ Գիւանի վրայ , որով կուզայ հրա-
ժարել երեսփոխանութենէ , իւր անձնական
դրազմանց պատճառաւ :

Ատենազօյր էֆէնտի կընթեռնու այն
հրաժարագիրն :

Ամեն Սրբազան Պատրիարք
Նախագահ Աղգ. Ժողովոյ ,

Այս միջոցիս պաշտօնական զբա-
ղունքս յոյժ աւաւելեալ լինելով , Աղ-
գային պարտավանութեան մէջ պոխ-
տաւոր չը գտնուելու գիտմամբ , հարկ
կը տեսնեմ Աղգային երեսփոխանութե-
նէ հրաժեշտ տալ , և կը սիրեմ յուսալ
թէ Պատկառելի Ժողովոյ այն պարզ հը-
րաժարականս ընդունելով , տեղի չը թո-
ղոր ինձ երէքիկն և չըրէքիկն բացա-
կայութեամբ իւր կողմէն հրաժարեցուց-
ման արժանանալու .

Մեամ յարգանք

Զերդ Սրբազնութեան

Խանար Ծառայ

Յովհաննէս Ազնաւորեան

Հաւաքելի , 2 Յուլիս 1885

ԹԱԴԷՈՍԵԱՆ Ռ. ԷՃ. — Պարզ է այդ
հրաժարականն և սէտք է ընդունիլ զայն :

Երեսփոխանք ձայնակցելով Թաղէտեան
Ռէթէոս էֆ.ի , Ատենապետ էֆէնտի բուկի
կը զնէ տոյն պարզ հրաժարագիրն , որ ԿԸՆ.
ԳՈՒՆՈՒԻ միաձայնութեամբ :

Հետևարար Ատենապետ էֆէնտի՝ Երես-
փոխանութենէ հրաժարեալ կը յայտարարէ
ղծովաննէս էֆէնտի Ազնաւորեան :

3.

Երեսփոխանական ընտրութիւնք Օրբա-
գիւղի , Իսկիւտար Ս. Կարապետ Էս Գոսմ-
Գարուի միացեալ բաղից .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Մէկ բանի երեսփո-
խանական ընտրութիւններ կան կատարուած ,
որոց տեղեկագիրք , հանդերձ Ս. Պատրիարք
Զոր ծանօթագրով , ասանդուած են Գիւանիս :
Ահաւարկ հորին Արտոյնութեան ծանօթագիրն :

Վտեմալուք Ատենապետ էֆէնտի
Աղգ. Երեսփոխանական Ժողովոյ

Միջագիւղի Թաղին կողմէ Երես-
փոխան ընտրուած է ,

Յարութիւն էֆէնտի Նորատուկեան ,
որ ընդունած է տոյն պաշտօնը :

Իսկիւտարի Ս. Կարապետ Եփեղեց-
ւոյ Թաղին կողմէ Երեսփոխան ընտրը-
ուած է ,

Միհրան էֆէնտի Սեթեան
որ իւր յանձնառութիւնը յայտնած է
գրով :

Մայր Եփեղեցւոյ և միացեալ Թա-
ղից փեմախա զարարեալ տառն և եօթն

Երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւն կատարուած և ընտրեալ Երեսփոխաններէն միայն վեցն ,

- 1. Յակոբ Էֆէնտի Դուրգէն
- 2. Մինաս » Չերազ
- 3. Տօբթ. Միհրան » Վարդազարեան
- 4. Խաչիկ » Կամարական
- 5. Յարութիւն » Մէրեհմ-Գուլի
- 6. Մկրտիչ » Կիւրճեան

Իրենց յանձնառութիւնն յայտնելով միւս տասն և մէկ ընտրեալք հրաժարական մատուցած են , որոց տեղ նորոգ ընտրութիւն տեղի պիտի ունենայ , ինչպէս ընտր. Ժողովն կը ծանուցանէ :

Արդ թէ և ըստ Սահմանադրութեան Գաղ. Ժողովոյ կը վերաբերի քննել նոր ընտիր Երեսփոխանաց ընտրութեան պայմաններն , բայց նորընտիր Գաղ. Ժողովն դեռ ևս իւր պաշտօնին գլուխն անցած չլինելով և Երեսփոխանական ընտրութեանց կարևորութիւնը նկատողութեան առկով՝ արժան դատեցինք ստուգել ընտրելոց հանգամանքն և համաձայն գտնելով Ազգ. Սահմանադրութեան տրամադրութեանց՝ կը փութամբ ընտրութեանց գրեւն հաղորդել Ազգ. Ժողովոյդ , որպէս զի՝ եթէ բաւական կը համարի մեր սոյն ծանօթագիրն , հաճի նկատողութեան առնուլ նոյն տեղեկագրերն և պարտ ու պատշաճն տնօրինել :

Մնամբ աղօթարար

Գ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ

4 Յուլիս 1885

Կ. Պօլիս

(ՅԵՐ ԸՆԵՐԿՅԱՆ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէպէտև Քաղտրական Ժողովոյ Պարոն է քննել ընտրելոց բազարական հանգամանքներն , բայց ինչպէս լսեցիք սոյն տեղեկագրէն , որովհետև նոր Քաղական Ժողովն տակաւին չէ կազմակերպուած , Ս. Պատրիարք Հայրն ինք քննած է ընտրելոց հանգամանքն և կը յանձնարարէ Ժողովոյս , որ եթէ այդ քննութիւնն բաւական կը համարի , կրնայ ընտրութեանց վաւերացման ձեռնարկել :

ՃԱՆՐՄԵԱՆ Մ. ԷՖ. — Այդ տեսակ պարագայի մը մէջ ի՞նչ կը տրամադրէ Սահմանադրութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ մասին մեր Սահմանադրութեան մէջ ու է տրամադրութիւն մը գծուած չկայ , բայց Ժողովոյս ներքին Կանոնադրի Գրդ. յօդուածն կ'ընէ՝ ընտրուել Երեսփոխանի մը ընտրելութեան պայմաններն ապահովող ծանօթագիրն Ս. Պատրիարք Հօր կողմէն Մայր-Դիւանին կաւանդուի :

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Ուրեմն Նորին Արքայնութեան այդ ծանօթագիրն բաւական է :

ՁԱՏԵՆԵՐ . — Այո՛ , բաւական է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն կանցնինք սոյն Երեսփոխանական ընտրութեանց վաւերացման :

Ձայս ասելով , Ատեհապետ Էֆէնտի կը հրաւիրէ զԱտեհազպիր Էֆէնտի նոյն ընթեռնու Օրթագլուղի Երեսփոխանական ընտրութեան տեղեկագիրն , ինչպէս և ընտրելոցն յանձնառագիրն :

Ամենապատիւ Սրբազան Հայր
Նախագահ Ազգային Ժողովոյ,

Գիւղիս հրաժարեալ Երեսփոխանին տեղ նոր ընտրութիւն կատարելու համար, Ձեր Բարձր Սրբազնութեան կողմանէ յղուած հրահանգին համաձայն, ըստ օրինի Ընտրողական Ժողովս գումարուելով՝ երեսփոխանական ընտրութեան վերաբերեալ ամեն օրինական պայմանները կատարելէ յետոյ, ընտրողաց դիւրութեան համար ընտրելեաց եռապատիկ ցանկ մը պատրաստեց և յատուկ հրաւիրագրով յղեց զայն թաղիս հարիւր քսան ընտրողներուն:

Որոշեալ օրն, 9 Յունիս, ի ներկայութեան Ընտրողական Ժողովոյ, քուէ համարի գործողութիւնը կատարուելով՝ հետեւեալ արդիւնքը ունեցաւ:

Թաղիս ընտրողներէն 77ին մասնակցութեամբ՝ որոց 46ն անձամբ և 31ը նամակաւ, և 67 քուէից բացարձակ առաւելութեամբ՝ Երեսփոխան ընտրուեցաւ

Մեծ. Յարութիւն էֆ. Նորատունկեան, որ հաղորդած է մեղ իւր յանձնառագիւրըն, զոր կ'ստանայք ներփակեալ:

Մատուցանելով, Սրբազան Հայր, մեր ամենախորին մեծարանաց հաւաստիքն՝

Մնամք խոնարհ ծառայք
Ձեր Բարձր Սրբազնութեան
Նախագահ, Ընտրող Ժողովոյ
Յակոբ Վ. Աշոտ Փափագեան

Ի գիւմաց Ընտրողական Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Յ. Գուրգէն Ա. Ֆրէնկեան

-25 Յունիս 1885, Օրթաքէոյ

Գերապատիւ Ս. Հայր,

Ստացայ Ձեր Գերապատուութեան պաշտօնագիրը որով կը կոչէք զիս Ազգ. Երեսփոխանութեան պաշտօնին յանուն Միջագիւղի Մեծապատիւ Թաղեցոց:

Միևնոյն տարուան միջ այս երկրորդ անդամն է որ Պատ. Թաղեցիք կը պատուեն զիս իրենց վստահութեան քուէոցն, կարելի չէ ինձ չ'զգածուիլ այդ համակրայից ցոյցերուն առջև և կը ինդրեմ որ հաճիք թարգման կանգնիլ իմ երախտագիտական զգացմանցս առաջի Մեծ. ընտրողաց:

Թէպէտ մտադիր էի առ այժմ ազգային որ և է նոր պաշտօն շտանձնել, մանաւանդ Երեսփոխանութեան պաշտօնն որմէ հեռի մնալ կը ցանկայի ստեն մը ևս անձնական այլ և այլ պատճառներով և սակայն՝ մերժելով խոնարհիլ Միջագիւղի ազգայնոց այս երկրորդ անգամ յայտնած բացորոշ կամացը առջև, թերևս չափազանց կարեորութիւն տալ երեւիմ անձիս, զչան որոյ կը փութամ յայտարարել թէ կընդունիմ ինձ յանձնուած այդ պաշտօն և խօստանամ մասնակցիլ իմ կարողութեանս չափովն Ազգային Ժողովոյ գործառնութեանց:

Մնամ Ձերգ. Գերապատուութեան
Յարգանքը

Յարութիւն Նորատունկեան

18/50 Յունիս 1885

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Սոյն տեղեկագրին օրինաւորութեան մասին ղիտողութիւն ընող կոյ՛:

Ոչ որ ղիտողութիւն ընելով, Ատենապետ Էֆէնտի բուէի կը զնէ այն ընտրութեան օ.

րինաւորութիւնն որ ԿԸՆԴՈՒՆՈՒԻ միսձայնութեամբ :

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտի Օրթա գիւղի թաղէն Աղգային Երեսփոխանն ԿԸՂԻՉԱԿԷ՛ :

ՉՅարութիւն Էֆ. Նորատունկեան

ԱՏՏՆԱՊԵՏ ԷՏ. — Այժմ կանցնինք իսկիւտարի Ս. Կարապետ թաղի Երեսփոխանս. կան ընտրութեան :

Ատենադպիր Էֆէնտի կընթեւնու սոյն ընտրութեան վերաբերեալ Հետեւեալ պաշտօնադրերն :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր Նխաագահ Աղգային ժողովոյ ,

Ձեր Բարձր Սրբազնութեան թիւ 115 և Յունիս 1 ամսաթիւ պաշտօնագիրն ստացանք , որ թաղիս կողմէ ընտրեալ Երեսփոխաններէն վախճանեալ Պահճէգարուքան Մեծ. Միհրան Էֆէնտի տեղ նորոգ ընտրութիւն կատարել կը յանձնարարէր :

Ըստ հրահանգի Բարձր Սրբազնութեան Ձերոյ . Թաղիս Թաղական Խորհրդոյ անգամոց թուոյն վրայ թաղիս պատուարժան Աղգայիններէն վեց անձինք ևս յաւելլով Ընտրողական ժողովն կազմուեցաւ :

Ընտրողական ժողովն ի 16 Յունիսի, Կիւրակէ օրն իւր առաջին նիստն ընելով դիւանը կազմեց և յետ քննութեան պատրաստեց ընտրողաց ցանկը , որ 88ի յանգեցաւ . նոյնպէս և ի դիւրութիւն ընտրողաց՝ ընտրելեաց եռապատիկ թուովը ցանկ մը պատրաստեց գաղտնի քուէարկութեամբ , և զանոնք զբաւ ի տես ժողովրդեան մինչ ութ օր . և ընտրութեան հրահանգը տպագիր նամակօք Յունիս 17էն սկսեալ հաղոր-

դեց քուէարկուց և հրաւիրեց որ իւրեանց ընտրողական իրաւունքն ի դործ դնեն Յունիս 23, Կիւրակէ օր , ծանուցանելով նաև ընտրելութեան և այլ պայմանները , զորս Աղգային Սահմանադրութիւնը դժժած է :

Որոշեալ օրը քուէարկութեան գործողութիւնը կատարուելով , տեսնուեցաւ որ 88 ընտրողներէն 42 ընտրող միայն մասնակցած են քուէարկութեան , 24ն անձամբ և 18ը նամակաւ , և քուէհամարը կատարուելով բացարձակ առաւելութեամբ քուէից Երեսփոխան ընտրուեցաւ՝

Մեծ. Միհրան Էֆէնտի Սէթեան քուէ 24

Ընտրողական ժողովս սոյն նորընտիր Երեսփոխան Էֆէնտիին ընտրութիւնը Յունիս 25 թուական յատուկ նամակաւ ծանոյց իրեն , և խնդրեց որ իւր յանձնառութիւնը հաճի զբով հաղորդել :

Մեծ. Միհրան Էֆէնտի Սէթեան հաճեցաւ ընդունիլ Երեսփոխանութեան պաշտօնն և տալ զիւր յանձնառագիր , զոր կը ներկայեմք ի տեղիկագրիս :

Ընտրողական ժողովս կը յայտնէ թէ սոյն նորընտիր Երեսփոխան Էֆէնտին երեսուն տարին լրացուցած , ընտրելութեան իրաւանց տէր և Օսմ. հպատակ է :

Չայս ամենայն տեղեկագրելով առ Բարձր Սրբազնութիւն . Ձեր ,

Մնամբ յարգանօք
Ի դիմաց Ընտրող ժողովոյ
Նխաագահ

Մատթեոս Եպիս. Իգմիրեան
Ատենադպիր Վ. Ատենապետի
Ա. Արապեան Պապիկ Գ. Գալթրեան

30 Յունիս 1885

Գերապատիւ Սրբազան Հայր
Նախագահ Ընտրողական Ժողովոյ
Ս. Կարապետ Եկեղ. Նոր-Թաղի յ'Իւսկ.

Յունիս 23 Թուագրեալ պաշտօնա-
գիրդ ստացայ, յորում Թաղիս պատ-
ուարժան Երեսփոխանական ընտրողաց
իւր քուէիւքը զիս պատուած ըլլանին կը
զեկուցանէք, կոչելով ի պաշտօն Ազգա-
յին Երեսփոխանութեան:

Ազնիւ ընտրողաց այս անգամ ևս
առ իս տածած համարմանը իմ երախ-
տագիտական շնորհակալութիւնս յայտ-
նելով հանդերձ, Երեսփոխանական պաշ-
տօնի պահանջմանցը իմ անբաւականու-
թիւնս յանձին կզգամ, բայց որպէս զի
ազնիւ ընտրողաց կամեցողութիւնը ան-
դոննած չլլամ, կընդունիմ առաջարկ-
եալ այս բարձր պաշտօնը և պիտի ջա-
նամ օգտակար անդամակցաց հետեող
լինիլ:

Մնամ յարգանքը
Միհրան Սեբեան

29 Յունիս 1885

Ի Նոր-Թաղ յ'Իւսկիւտար

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՃ. — Յատկի է արդա-
րև որ Իւսկիւտարի նման բաղմահայ Թաղի մը
մէջ մի միայն 88 ընտրողը գտնուին և անոնց
ալ 42ը միայն մասնակցին ընտրութեան, ինչ-
պէս կը յայտնէ այդ տեղեկագիրն:

ՁԱՅՆԵՐ. — Իրաւո՛ցի է:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՃ. — Ես չեմ կրնար
մասնակցիլ այդ տեսակ ցաւակցութեան մը,
զի բնաւ տեղի չկայ:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՃ. — Ի՞նչպէս ատեղի
չկայ: Ընտրութեան մէջն է հոգին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Թիրեաքեան էֆէն-
տիի յայտնած ցաւն ըսկ բարոյակոն է, և
կարծեմ ամենրիս ալ համարիտ եմք սա կէ-
տին վրայ թէ՛ ժողովուրդն մեծաւ մասամբ
անտարբեր կը կենայ իւր իրաւանց և պարտոց
գործադրութեան մէջ. թէ և միջանկեալ խն-
դիր մ'է այս, բայց և այնպէս Գիւտնս ալ
կը յայտնէ իւր ցաւն ժողովրդական այս ան-
տարբերութեան նկատմամբ:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՃ. — Ես դո՛ւ եմ որ
Իւսկիւտարի մէջ ըստ ուշադրութիւն եղած է՛
ըստ Սահմանադրութեան՝ ընտրողաց թիւը
ճշդելու, և ոչ թէ Թօի-Գաբուի նման քանի
մը հարիւր ընտրողներ ցոյց արուած են, որով
և Ժողովս խաբած:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՃ. — Յատկի է որ
Թորոսեան էֆ.ի նման խոհեմ Երեսփոխան մը
կուզէ մասնաւորել խնդիրն իւր մտքին մէջ և
տարբեր ուղղութիւն մը տալ անոր:

ԹՆԿՐԵԱՆ Ա. ԷՃ. — Ընտրեալն արժա-
նաւորութիւն ունի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՃ. — Տարակոյս չի կայ թէ
առարկեալ Թաղերու ընտրելոց անձնական
արժանաւորութիւնը ոչ որ ժխտած կամ կաս-
կածոնաց ենթարկած է, վասն զի երկուքն
ալ այն պաշտօնին համար մեր արժանաւորա-
գոյն պաշտօնակիցներէն ըլլանին յայտնի է:
Ուստի մեր արտայայտած ցաւն պէտք է հա-
ւտարապէս ակնարկէ այն Թաղերուն՝ ուր ազ-
գայինք անտարբեր են իրենց ընտրողութեան
իրաւանց գործադրութեանը մէջ, ինչպէս նա
և զանոնք, որք կը չափազանցեն իրենց ընտ-
րողաց թիւը:

Այժմ Տեառք, ցաւելով հանդերձ որ
Իւսկիւտար Ս. Կարապետի նման բազմահայ
Թաղ մը 88 ընտրող միայն ունենայ. տեղե-
կագիրն օրինաւորութիւնն և ընտրելոցի ար-

ժանտուրութիւնն բնաւ խնդրոյ նիւթ եղած չի համարուիր : Հետևաբար ձեր հաւանութեանը կենթարկեմ ընտրութեան տեղեկագրին վաւերացումն :

Քուէարկութիւնը կատարուելով , ժողովն միաձայնութեամբ կը ՆԳՈՒՆԻ տոյն տեղեկագրի օրինակութիւնն , և ըստ այնմ՝ Ատենայեա տէֆէնտի Ազգային Երեսփոխան կը ՀԸՌ. 2 Ա.կէ :

ՂՄԻՆՐԱՆ ԷՓԷՆՈՒ ՍԷՍԵԱՆ

Սոյն պահուն Բ. Ատենադպիր Էֆէնտի գալով կանցնի իւր Աթոռն :

ԱՏՅՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ կարգն կուգայ Մայր-Եկեղեցւոյ և Միացեալ Թաղից կողմէ ընտրեալ վեց երեսփոխանաց վաւերացման : Ուտտի կը հրաւիրեմ Ատենադպիր Էֆ. ընթեռնուլ նախ Ընտրողական Ժողովոյ տեղեկագիրն :

ԱՄԵՆԱԿԱՏԻՒ ՍՐԵԱՂԱՆ ՊԱՏՐԻԱՐԵՔ ՀՅՐԵ ՆԱԽԱԳԱՏ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՅ ,

Մայր Եկեղեցւոյ Կէտիկ-Քաչայի և Գուժ Գարուի դրսի Միացեալ Թաղից երեսփոխաններն վիճակաւ դադարեալ ըլլալով , ըստ ուղղման Ազգային Երեսփոխանական Պատկառելի Ժողովոյ , հրահանգեկած էր մեզ Ազգային Պատրիարքարանէ նոր ընտրութիւն կատարելու համար :

Ըստ այսմ Ընտրողական Ժողով կազմուելով , նախապատրաստական գործողութիւնք կատարուելէ , ընտրողաց և ընտրելեաց ցանկերը պատրաստուելէ և լըրագրաց և նամակաց միջոցաւ ընտրողաց հրաւեր ըլլալէ վերջը , Յունիս 9 Կիրակէ օր ընտրութիւն կատարուեցաւ . 399 ընտրողներն միայն 176 քուէարկութիւնք ,

64ք անձամբ և 112ք նամակաւ , ընտրութեան մասնակցելով , բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրուեցան հետևեալ 7 Մեծապատիւ անձինք :

		Քուէ
1. Խաչիկ	Էֆ. Կամարական	141
2. Գրիգոր	» Շամտանճեան	138
3. Յարութիւն	» Մէրեւմ-Գուլի	106
4. Գէորգ	» Ապտուլլահ	97
5. Պօղոս	» Ժամակոչեան	92
6. Մինաս	» Չերազ	90
7. Յակոբ	» Գուրգէն	89

Իսկ մնացեալ տասը Երեսփոխանաց ընտրութեան համար քուէից համեմատական առաւելութիւն ստացող անձանց երկպատիկ ցուցակը Թաղեցւոց ներկայացուելով , յաջորդ Կիրակի օր Յունիս 16 , քուէարկութիւն կատարուեցաւ և առաւելագոյն քուէով Երեսփոխան ընտրուեցան հետևեալ Մեծապատիւ անձինք :

		Քուէ
1. Ալիքսան	Էֆ. Խօրասանճեան	113
2. Տիգրան	» Թօգատեան	104
3. Երամ	» Ճէնազ	95
4. Երանոս	» Կիւմիւշեան	93
5. Մլրտիչ	» Կիւրճեան	93
6. Գրիգոր	» Խանճեան	88
7. Բերովբէ	» Լիմոնճեան	86
8. Յարութիւն	» Գնանճեան	80
9. Մլրտիչ	» Գալվանօղեան	75
10. Տօք. Միհր.	» Վարդաղարեան	74

Վերոյիշեալ նորընտիր 17 Երեսփոխաններէ

Յակոբ	Էֆ. Գուրգէն
Մինաս	» Չերազ
Տօք. Միհրան	» Վարդաղարեան
Խաչիկ	» Կամարական

Թարութիւն Էֆ. Մէրէէմ-Գուլի
Մկրտիչ » Կիւրճեան

իրենց յանձնառագրերն զրկեցին զոր
ներկայեալ կը մատուցանեմք Ձերդ
Բարձր Սրբազնութեան :

- Իսկ Տիգրան Էֆ. Թողատեան
- Պօղոս » Ժամակոչեան
- Երանոս » Կիւմիւշեան
- Գրիգոր » Խանճեան
- Գէորգ » Ապտուլլահ
- Գրիգոր » Շամտանճեան
- Թարութիւն » Գնաճեան
- Երամ » Ճեմազ
- Ալիքսան » Խօրասանճեան
- Քերովբէ » Լիժոնճեան
- Մկրտիչ » Գալանօզեան

իրենց հրաժարագրերը զրկեցին :

Սոյն տեղեկագիրը մատուցանելով
Բարձր Սրբազնութեան Ձերում և յայտ-
նելով որ հրաժարելոց տեղ նորոգ ընտ-
րութեան պիտի ձեռնարկեմք ի մօտոյ :

Մնամք ամենախոնարհ ծառայք

Նախագահ

Ընտր. Ժողովոյ Երես. Միացեալ Թաղից

Սուրխաս քնյ. Ստեփաննոսեան

Ատենադպիր

Մ. Յ. Մէլիքեան

Ատենապետ

Մկրտիչ Ինճեան

1885 Յուլիս 3

Ի Մայր-Եկեղեցի

(Յէր ընկերոջ)

ԱՅՏՆԱԳՊԻՐ ԷՅ. — Կուղէ՞ Ժողովդ լսել
նաև ընտրելոց յանձնառագրերն :

ԱՅՏՆԵՐ. — Ո՛հ, հարկ չկայ :

Ատենապետ Էֆէնտի առ այս վերադառնալով
վոյ կամոց կը զիմէ որ ԿՈՐՈՇԷ նոյն յանձնառա-
գրերն անցնել տոնադրութեան մէջ միայն :

Արժանապատիւ Հայր ,

Խորապէս յուզեալ կը փութամ
սրտագին շնորհակալութիւնս մատուցա-
նել Մայր Եկեղեցւոյ, Կէտիկ-Փաշայի
և Գում-Գաբուի դրսի Միացեալ Թաղից
պատուական ընտրողաց այն բարձր վըս-
տահութեան համար որով պատուած են
զիս՝ կոչելով վերադառնալու պաշտօն երես-
փոխանութեան :

Պատուարժան ընտրողաց կողմանէ
առ իս ցոյց տրուած այս խրախուսիչ
վստահութեան առջև, կ'ուխտեմ ան-
յեղի մնալ այն սկզբանց մէջ զոր առա-
ջադրած էի առաջին ընտրութեանս մի-
ջոցին, և զոր կը համարեմ միակ առա-
ւելութիւնն որով արժանացայ այս երկ-
րորդ անգամ իւրեանց վստահութեան :

Իմ անխախտ սկզբանցս համաձայն,
արիւթեամբ զճետ պիտի երթամ միշտ
ուղղութեան և անկեղծութեան, ուստի
և փոյթ չպիտի լինի ինձ՝ թէ որո՞ց պի-
տի վերաբերիմ և կամ որո՞ց չպիտի վե-
րաբերիմ այս ժողովրդական պաշտօն-
մանս մէջ :

Մնամ խորին յարգանքք

Խոնարհ որդի ձեր

Յ. Գուրգէն

19 Յունիս 1885 յՕրթաքէոյ

Բարէշնորհ Հայր ,

Պատիւ ունեցայ ստանալ Ձեր պաշ-
տօնազիր, և կը փութամ յայտնել թէ
շնորհապարտ զգացումներով կ'ընդունիմ

Երեսփոխանութիւնն մի թաղի ուր կը հանգչի Ներսէս Վարժապետեան :

Եմ միշտ, բարեչնորհ Հայր,
Ձեզ անձնուէր
Մ. Չեքագ

Բէրա, 19 Յունիս 1885

Արժանապատիւ Տ. Հայր

Շնորհակալութեամբ ընդունեցի Ձեր Արժանապատուութեան Յունիս 16 թըւական մի օրհնութեան նամակը :

Ձեր Արժ. Հայրութեան և պատ. ուարժան թաղեցւոց առ իս ցըցուցած վստահութեանն համար խորին շնորհակալութիւնս կը մատուցանեմ և ներկա. յիւս կը յայանեմ որ քաղցր է ինձ ծառայել իմովանն սիրելի Ազգիս և Ձեզ :

Խնդրելով Ձեր Արժանապատուութեան օրհնութիւնն՝

Մնամ սիրելի Ազգիս անձնուէր
Մինր. Վարդապետեան

19 Յունիս 1885 Սամաթիա

Շնորհազարդ Սուրբ Հայր,

Բնկալայ Ձեր Արժանապատուութեան ամսոյս 16 թուականս նամակն, որով ծանուցանելով Գումֆարուի, Կէտիկ Բաշայի և Գումֆարուի դրսի միացեալ թաղից կողմէ երեսփոխանական ընտրութիւնս՝ կը պահանջէիք իմ յանձնադիրն այս մասին :

Կը վստամ իմ շնորհակալութիւնս յայտնել Միտցեալ թաղիցք մեծապատիւ ընտրողաց, որ իւրեանց վստահութեան քուէովն այս երկրորդ անգամն է որ կը պատուեն զիս, ուստի այդ միա-

ձայն ընտրութեան առջև չմնար ինձ ընելիք, և եթ խոնարհիլ և մատուցանել Ձերդ Արժանապատուութեան իմ յանձնառութիւնս :

Մնամ յարգանք
Խ. Կամարական

20 Յունիս 1885

Արժանապատիւ Հայր

Յունիս 16 և 25 թուակիր գրութեամբք կը հրաւիրէիք զիս յանձնառութիւնս յայտնել փութանակի Աղբ. Երեսփոխանութեան պաշտօնին համար, յոր կը վերընտրեն զիս Մայր-Եկեղեցոյ, Կէտիկ-Բաշայի և Գումֆարուի աղիւ թաղեցիք :

Վարանեցայ դոյնն ինչ պատասխանել Ձեր հրաւերին, զի շուրջ վեշտասանամեայ երկարատե պաշտօնավարութենէ խոնջեալ՝ պատշաճադոյն պիտի համարէի նոր կորովներու և առողջ ուղեղներու թրուլ զայդ պաշտօն, եթէ ներկայ նոտաչըջանի խնդրոց կարդին մէջ աւագ կարևորութիւն ընծայուած չլինէր Սահմանադրութեան վերաքննութեան :

Թուի թէ անցելոյն փորձերն բաւեցին այլ ևս ապացուցանելու թէ այդ խնդրոց լուծումն շատ իսկ ուշացաւ, և թէ այդ յապաղում շատ սուղի նստաւ, Ուստի այնու յուսով թէ Ազգին Երեսփոխաններն ընդհանրապէս տրամադրուած են վերաքննութեան նկատմամբ համաձայնութեան յանդերու, կը վերտանձնեմ Երեսփոխանական պաշտօնն, ջանալու համար որ փորձառութեանէ քաղեալ դասերով ըստ կարելոյն օգտակար լինիմ դէթ վերաքննութեան խնդրոյն մէջ :

Հետևաբար կազաչեմ զՁեզ, Ար-
ժանապատիւ Հայր, որ հաճիք թարգման
կանգնել շնորհակալութիւններս յայտնե-
լու համար առ Մեծապատիւ ընտրու-
իմ, և ընդունել մեծարանացա ճատու-
տին :

Յ. Մերեմ-Գուլի

Բերա 1 Յուլիս 1885

Արժանապատիւ Տ. Հայր Նախագահ
Ընտրողական Ժողովոյ Միացեալ Թաղից,
Սուքիաս քահանայ Ստեփանոսեան

Յունիս 25 և Յուլիս 2 թուականա-
նամակներ ստացայ ձեր Նախագահու-
թենէն, որոց պարունակութիւնը Միաց-
եալ Թաղեցիք զմեզ ազգային երեսփո-
խան ընտրած ըլլալին կիմացնէ :

Թէպէտ և ազգայինք իրենց համա-
րումը ցոյց տուեր են, մենք կը փափա-
քէինք որ աւելի գերազայնները ընտ-
րուած ըլլային, դժբաղդաբար զմեզ ևս
սխչեր են :

Խորհելով խղճի մտքը չկրցի հրա-
ժարագիր տալ և յանձնառու կ'ըլ-
լամ ըստ կարի ծառայել սոյն կոչման :

Մնամ յարգանք

Մկրտիչ Գ. Կիւրճեան

3 Յուլիս 1885 Կէտիկ-Բաշա

ԱՅՏԵԱՊԵՏ ԷՃ. — Ով որ կընդունի սոյն
ընտրութեանց օրինաւորութիւնն, թող հոճի
յայտնել զիր կամք :

Ժողովն միաձայնութեամբ ԸՆԳՈՒՆԵԼՈՎ,
սոյն ընտրութեանց օրինաւորութիւնն, Ատե-
տենապետ էֆէնտի ըստ այնմ Ազգային երես-
փոխան ԿԸ ՀՈՉԱԿԷ՛ :

- | | | |
|-----------|-----|-------------|
| Յակոբ | էֆ. | Գուրգէն |
| Յարութիւն | » | Մէրեմ-Գուլի |
| Մեհրան | » | Վարդազարեան |
| Մինաս | » | Չերազ |
| Խաչիկ | » | Կամարական |
| Մկրտիչ | » | Կիւրճեան |

ԱՅՏԵԱՊԵՏ ԷՃ. — Թոյլ աուր ինձ,
Տեարք, դիտողութիւն մ'ընել սոյն տեղեկա-
գրին առիթու :

Սոյն տեղեկագրէն տրդէն տեղեկացար որ
Մայր-Եկեղեցոյ և Միացեալ Թաղերէն միայն
6 երեսփոխաններ ընդուներ են իրենց յանձ-
նուած պաշտօնն, իսկ մնացեալ 11ը՝ հրամա-
րեր են և որոց տեղ՝ նոր Ընտրութիւնը պի-
տի կատարուին կըսէ՝ տեղեկագրին :

Այլ սակայն, այս միջոցիս որ կուզուի նոր
ոգէնտրութիւն մը տալ ազգային գործոց, մի-
թէ ժողովը յարմար կը տեսնէ մասնաւոր կո-
չում մ'ընել սոյն 11 երեսփոխանաց ազգասի-
րութեան, որպէս զի ընդունին իրենց յանձ-
նուած պաշտօնն :

ԱՅՏԵՆԵՐ. — Շատ լու :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՃ. — Արդէն Ընտրու-
կան Ժողովն մտադիր էր այդ տեսակ կոչում
մ'ընել, սակայն սոյն օրինակ ձեռնարկ մը իւր
ձեռնհասութեանէն վեր նկատելով, կը փափա-
քի որ նոյն կոչումն Ս. Պատրիարք Հօր կող-
մանէ տեղի ունենայ :

ԱՅՏԵՆԵՐ. — Այո՛, պէտք է յանձնել Ս.
Պատրիարքին :

ԱՅՏԵԱՊԵՏ ԷՃ. — Ուրեմն ալ որ կըն-
դունի Գիւտնիս սոյն առաջարկն, թող հոճի
յայտնել զիր հաւանութիւնն :

Հետևաբար բուէարկութիւն կատարուե-
լով, ժողովն ԿՈՐՈՇԷ յանձնել Ս. Պատրիարք
Հօր՝ որ Գում-Գարու և Միացեալ-Թաղից 11
ընտրեալ երեսփոխանաց ազգասիրութեան վե-
րատին կոչումն ընելով, հրաւիրէ դանոնք որ
ընդունին իրենց յանձնուած պաշտօնն :

Սոյն քուէարկութեան մէջ ձեռնպահ կը
մնայ Նշան էֆէնտի Գարագոչեանն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սէթեան Միհրան էֆ., որոյ ընտրութիւնն սրտով տոնջ վաւերացաւ, կը յայտնէ Դիւանիս թէ՛ ճամբորդութեամբ՝ ժողովոյս նիստերէն ժամանակ մը բոցակոյ պիտի մնայ :

Ե.

Տեղեկագիր Ամեն Ս. Պատրիարք Հօր յաղագս նրաժարականաց Քաղ. ժողովոյ նորընտիր անդամոց :

ԱՏԵՆԱՊԵՏ. ԷՖ. — Քաղաքական ժողովոյ ընտրութեանն առթիւ Ս. Պատրիարք Հօր կողմանէ հետեւեալ տեղեկագիրն յանձնուած է Դիւանիս :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգ. Երեսփոխանական ժողովոյ

Ստանալով Մայր Դիւանիդ Յունիս 28 թուականաւ գրութիւնն՝ որ Քաղաքական ժողովոյ երկոտասան անդամոց ընտրութեան արդիւնքը կը ծանուցանէր, վութացինք հրաւեր ուղղել նորընտիր ժողովականաց գումարուելու այսօր ի Պատրիարքարանս և ձեռնարկելու ի պաշտօն, սակայն մեր հրաւերին միայն խաչիկ էֆէնտի կամարական և Համազասպ էֆէնտի Պալլարեան պատասխանեցին անձամբ, յօժարութիւնս յայտնելով ստանձնելու սոյն պաշտօնն, եթէ իրենց անդամակիցք ևս ընդունին զայն. նոյնպէս Միհրան էֆէնտի Սէթեան պատասխանագրով մ'իւր յանձնառութիւնն ծանոյց, յայտնելով միանգամայն թէ յերոպա կուղևորէր, և վերադարձին կրնար աջակցել ժողովին, եթէ իւր ուղևորութիւնն արդեւք մը չէր համար-

ուեր իւր պաշտօնին հաստատութեան և եթէ իւր անդամակիցք ևս ընդունէին իրենց պաշտօնն. իսկ մնացեալ ինն անդամք՝ որք են, Աբիկ Ունճեան, Գաբրիէլ Նորատունկեան, Կոստանդ Կոստանդեան, Յովհաննէս Նուրեան, Յակոբ Յրէնկեան, Սերովբէ կիւլպէկեան, Սենեքերիմ Մանուկեան, Տիգրան կիւլպէկէրտան և Տիգրան Բարաղամեան էֆէնտիներն հրաժարական մատուցին, ոմանք իրենց զբաղումն և այլք անձնական տկարութիւնն մէջ բերելով, և այսպէս հակառակ մեր բաղձանաց և ակընկալութեան՝ Քաղ. ժողովն չկրցաւ գումարուել և անցնիլ իւր պաշտօնին գլուխն :

Քաղ. ժողովոյ ընտրութեան արդիւնքն գոհութիւն պատճառած էր մեզ, վասն զի Պատկառելի ժողովդ իւր իմաստութեամբն այնպիսի տարրերով կազմակերպած էր զայն, որ կրնար կարեւոր ծառայութիւններ մատուցանել Ազգին, և անոր անդամոց ազգասիրութենէն կպասէինք որ յօժարակամ սիրով պիտի ընդունէին իրենց յանձնուած պաշտօնն, ուստի յայտնելով մեր ցաւն այս հրաժարմանց վրայ՝ կը վութամք ընդ գրոյս Պատկառելի ժողովիդ հաղորդել ինն նորընտիր ժողովականաց հրաժարագրերն, որպէս զի բարեհաճի պարտուպատշաճն տնօրինել ի զարմանս սոյն վիճակին :

Մնամք արթմարար

Պ. Կ. Յարութիւն Արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիս 4 Յուլիս 1885.

ԱՏԵՆԱՊԵՏ. ԷՖ. — Հոյսով է կորցաւ հրաժարագրերն ալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այս, որպէս զի հաս-
կըցուի թէ՛ սպտճառարանեալ են անոնք թէ
ոչ :

Ատենապետ Էֆ.ի սոյն հրատարանաց վրայ,
Ատենադպիր Էֆէնտի կընթեռնու հետեւեալ
ինն հրատարագըրն :

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,
Պատիւ ունեցայ ստանալու Ամենա-
նապատուութեանդ 28 Յունիս թուա-
կան պաշտօնագիրը, յորում կը շնորհա-
ւորէ քաղ. Ժողովոյ անդամ ընտրուիլս :

Շնորհակալ եմ ընտրողաց ցոյց տուած
վստահութենէն նաև Ամենապատուու-
թեանդ իմ նկատմամբ յայտնած համա-
րումէն, սակայն կը ցաւիմ յոյժ թէ անձ-
նական տկարութեանս պատճառաւ ան-
կարելի է ինձ ընդունիլ զայդ պաշտօն,
վասն որոյ կաղաչեմ, Սրբազան Հայր, զի
ներողամտութեամբ ընդունիլ բարեհա-
ճիք հրատարականս և ընդ նմին այս առ-
թիւ ամենաջերմ յարգանացս հաւաստին,

որով մատչիմ ի համբոյր Սուրբ Եղիշ և
Մնամ Ամենախոնարհ ծառայ
Աբիկ Ռեճեան

Կ. Պօլիս, 3 Յուլիս 1885

Բարձրաշնորհ Սրբազան Հայր,

Պատիւ ունեցայ ստանալ Ձեր Բարձր
Սրբազնութեան 28 Յուլիս ամսաթիւ
պաշտօնագիրն որով կը հրաւիրէք ըզ
նուաստս յանդամակցութիւն քաղաքա-
կան Ժողովոյ :

Խորին շնորհակալութիւնս յայտնե-
լով Ձեր Բարձր Սրբազնութեան և առ
Ազգային Ժողովն իւր ցուցուցած այս

վստահութեան ու համարմանն համար,
պարտ անձին կը համարիմ վստալ յա-
ւելուլ թէ՛ պաշտօնական զբաղմունքս
կարի ծանրաբեռնեալ լինելով, չեն թող-
ատրէր ինձ ընդունել սոյն պաշտօն :

Մնամ Ձեր Ամենապատուութեան
ամենայն յարգանօք և ակնածանօք

Խոնարհ որդի
Գ. Նորատունկեան

Մեծ կղզի, 3-15 Յուլիս 1885

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Պատիւ ունեցայ ստանալու Ձեր Բար-
ձր Սրբազնութեան 28 Յունիս թուա-
կանով և 188 թուանշանով յարգելի
զրութիւնն որով բարեհաճած էք իմա-
ցնել ինձ Երեսփոխանական Ժողովոյ զիս
անդամակից ընտրելն և կը հրաւիրէք
ներկայ գտնուիլ 4 Յուլիսի նստին :

Ներկայելով Ձեր Բարձր Սրբազ-
նութեան իմ խորին երանտադիտական
ղգացմունքս վասն այն վսեմ խօսքերուն
որով կը շնորհաւորէք զիս Երեսփոխա-
նական Ժողովոյ կողմանէ այս առթիւ
ինձ տրուած համարման և վստահու-
թեան զբաւականին համար և որմէ ազ-
դուեցայ ուժգնապէս, կը ցաւիմ սակայն
յայտարարելու թէ՛ որչափ որ նուիրա-
կան պարտաւորութիւն կը համարիմ
այսպիսի ազգային պաշտօն մը ստանձնելն,
այսու ամենայնիւ պաշտօնիս բազմա-
թիւ զբաղմունքը արգելք կը դնեն այդ-
փափաքիս կատարմանը, ուստի ցաւ ի
սիրտ պարտաւորեալ եմ չի կարենալ ըն-
դունիլ Ազգային որ և է պաշտօն և ներ-
կայել իմ հրատարական քաղաքական

Ժողովոյ անդամակցութեան, առ Զերդ-
Բարձր Սրբազնութիւնն :

Մնամ Ամեն. Բարձր Սրբազնութեանդ
Ամենախոնարհ ծառայ
Կ. Գ. Կոստանդէան

Կ. Պօլիս, 2 Յուլիս 1885

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Ի սպասախանի Զեր Բարձր Սրբազ-
նութեան 28 Յունիս 1885 թուահամար
հրամանագրի՝ կը փութամ նախ յայտնել
իմ երախտապարտութիւն առ Ազգային
Երեսփոխանական Պատկառելի Ժողովն,
որ վերջին ընտրութեանց առթիւ բարե-
հաճած է կոչել նաև զնուաստս յան-
դամակցութիւն կեդրոնական վարչու-
թեան Բաղաքական Ժողովոյ :

Թէպէտև միշտ վառ է փափաքս
իմ կարողութեանս չափով օգտակար ըլ-
լալու իմ սիրելի Ազգիս, բայց կը ցաւիմ
որ այս պարագայիս մէջ իմ զբաղմանցս
բողոքաստիպութիւնը չնկեր էր ինձ ստանձ-
նելու այսպիսի կարևոր պաշտօն մը, ո-
րուն պատասխանատուութիւնը կրգամ
իր բոլոր ծանրութեամբը. հետևաբար
ստիպուած կը տեսնեմ զիս աղաչելու ըզ
Զեր Բարձր Սրբազնութիւն, որպէս զի
բարեհաճի իմ խորին շնորհակալեօքս
հանդերձ հաղորդել իմ հրաժարականս
առ ազգային Պատկառելի Ժողովն :

Մնամ խորին յարգանօք

Ամենախոնարհ ծառայ
Յ. Նուբեան

Կ. Պօլիս 3-13 Յուլիս 85

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Պատիւ ունեցայ ընդունիլ Զեր
Բարձր Սրբազնութեան Յունիս 28 թը-
ւագրեալ նամակն, որով Ազգ. Պատկա-
ռելի Երեսփոխանական Ժողովոյ կողմէ
նորոգ ընտրեալ Բաղաքական Ժողովոյ
անդամակցութեան ընտրուիլս ծանու-
ցանելով հանդերձ, նաևս կը հաճիք
հրաւիրելի Պատրիարքաբան, որպէս զի
ստանձնեմք մեզ յանձնուած ամենա-
փափուկ և կարևոր պաշտօնը Ազնու-
մեծար անդամակիցներուս հետ :

Արդ քաղցր է ինձ ամենասիրելի
Ազգիս իմ կարողութեանս չափ ծառա-
յել, և որոյ համար կը փութամ մա-
տուցանել իմ անհուն շնորհակալեօքս
Պատկ. Երեսփոխանական Ժողովոյ, որ
իւր բարձր վստահութեամբն պատուած
է զիս կոչելով յայս պաշտօն : Բայց
քե՛զ ինչպէս քար ծանրածանր զբաղմունք-
ներս կարգիլեն նուաստիս սոյն փափուկ
պաշտօնն ընդունիլ, հետևաբար կուգամ
Զեր Բարձր Սրբազնութեան հայրական
ներողութիւնը հայցելով մատուցանել
հրաժարականս, և խնդրել որ հաճիք
ընդունիլ :

Որով մնամ Զերումք Ամենապատ-
ուութեան

Ամենախոնարհ ծառայ
Յակոբ Յրեկեան

1885 Յուլիս 3/15

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր,

Բարձր Սրբազնութեանդ անցեալ
ամսոյ 28 թուակիր օրհնառաք զբու-
թիւնն ստանալու պատիւն ունեցայ, ո-
րով նորոգ կաղմակերպեալ Բաղ. Ժողո-

վայ նուստտիս ևս ժողովական ընտրուիլն ծանուցանելով՝ կը հրաւիրէք զիս ներկայիլ սորա առաջին նստին գումարելի յԱզգ. Պատրիարքարան ի և Յուլիսի :

Երևատագետ եմ Ազգային ժողովոյն առ իս ցոյց տուած վստահութեան և համարման համար :

Արդարև փափաքելի էր ինձ Բարձր Սրբազնութեանդ նախագահութեան ներքեւ անդամակցել Բազ. ժողովոյ մը : Բայց արդէն անձնական և ազգային զանազան զբաղմունք ծանրացած են ժամանակիս վրայ, նա մանաւանդ նկատելով որ Բազ. ժողովականէ մը ակն ունելի անհրաժեշտ հանդամանք կը պակսին յիս, ստիպուած եմ Ձեր պատուաբեր հրաւերէն նահանջիլ և յղել սոյն հրաժարագիրս տեղի տալով այլ արժանաւորագունի մը :

Սոյն վարմունքովս չունիմ այլ ինչ ի նկատի բայց եթէ օգուտն Ազգին :

Այս առթիւ մատչելով ի համբոյր օրհնաբուզիս Ս. Ոջոյդ, մատուցանեմ Բարձր Սրբազնութեանդ որդիական յարգանացս և ակնածանացս հաւաստին

Սերովբէ Կիւլպէնկեան

Կ. Պոլիս 3 Յուլիս 1885

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Պատիւ ունեցայ ստանալ Ձերդ Ամենապատուութեան Յունիս 28 թուական թիւ 188 հրաւիրագիրն, որով Ազգային Երեսփոխանական Պատկառելի ժողովոյ որոշումը կը հաղորդէինք նաւաստիս, վերաբերմամբ ընտրութեանս յանդիմակցութիւն Ազգ. Կեդրոնական վարչութեան Բազ. ժողովոյ :

Փափաքելի էր ինձ սիրով համապատասխանել այն համարման ու վստահութեան դրաւականին, որով սիրելի Ազգս կը պատուէ զիս, սակայն ցաւ է ինձ յայտնել թէ անձնական տկարութեան պատճառաւ՝ չպիտի կարենամ ստանձնել սոյն պաշտօն :

Վստահ լինելով որ Ձեր Բարձր Սրբազնութիւն ներողամիտ պիտի լինի իմ այս ակամայ հրաճարմանս,

Մնամ խորին ակնածութեամբ

Սիգեքերիմ Մանուկեան

2/4 Յուլիս 1885

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր,

Պատիւ ունեցայ ընդունիլ Ձեր Բարձր Սրբազնութեան 28 Յունիս թուականի նամակը, որով կիմացնէք Ազգ. Վարչութեան Բաղադրական ժողովոյ անդամ ընտրուիլս. նախ շնորհակալութիւնս կը յայտնեմ Երեսփոխանական Պատկառելի ժողովոյն ազնիւ անդամոց՝ որ զիս իւրեանց քուէներոջն պատուած են, բայց ցաւ է ինձ իմացունել որ չի պիտի կարենամ ընդունիլ զայս պաշտօն, նախ իմ կարողութենէս վեր է այդպիսի փափուկ պաշտօն մը ընդունիլ և երկրորդ՝ արդէն ունիմ ազգային պաշտօն մը, այն է Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը որ պղտիկ դործ չէ. հետեւաբար երկու պաշտօն միատեղ չեմ կարող տանիլ, ուստի կը ինչդրեմ խոնարհաբար որ ընդունիք իմ հրաժարական :

Մնամ համբուրու Սուրբ Աջոյդ

Խոնարհ ծառայ

Տիգրան Կիւմիւլկերտան

Կ. Պոլիս, 29 Յունիս 1885

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայր, Նախագահ Ազգ. Կեդր. Վարչութեան

Ձեր Բարձր Սրբազնութիւն 188 թուակիր պաշտօնագրով կը ծանուցանէր թէ Ազգ. Երեսփոխանական Պատ. Ժողովն անդամ ընտրած է զմեզ Կեդրոնական Վարչութեան Գաղաքական Ժողովոյ, և կը հրահարէր զմեզ այսօր, Հինգշաբթի ի Պատրիարքարան ուր նորընտիր Գաղաքական Ժողովոյ անդամք ևս հըրաւիրեալ են իւրեանց առաջին նիստը կազմելու :

Փափաքելի էր ինձ Սրբազան Տէր, ընդունել Երեսփոխանական Պատկ. Ժողովոյ սոյն ընտրութիւնն, որոյ համար կը փութամ յայտնել իմ խորին շնորհակալութիւն, սակայն անձնական բազմադիմի զբաղումներս չեն ներէր ինձ ըստ արժանւոյն վարել այս կարևոր պաշտօն, ուստի ներկայիս զիմ հրաժեշտ մատուցանելով յանդամակցութենէ Ազգ. Գաղ. Ժողովոյ, կը մատչիմ ի համբոյր Ձեր Բարձր Սրբազնութեան սուրբ աջոյն և,

Մնամ ամենախոնարհ որդի Տ. Բարսղամեան

4-16 Յուլիս 1885

Ղալաթիա

(Յեք ընկերցալ)

ԱՏՆԱՊԵՏ ԷՃ. — Կը տեսնէք, Տեարք, որ նորընտիր Գաղ. Ժողովոյ անդամներէն միայն երեքն, այն է՝ Պալլարեան, Կոմսարական և Աթեան էֆէնտիք ընդունելու են Գաղ. Ժողովոյ անդամակցութիւնն՝ այն պայմանաւ որ իրենց պաշտօնակիցը ալ ընդունին նոյն պաշտօնն :

Համեմատական ընտրութեամբ ընտրել երկու անդամոց, որք են՝ Պոյաճեան Յով.

Հաննէս և Սարայեան Ալիբասն էֆէնտիքերուն ընտրութիւնն, որ այժմ պաշտօնապէս կը հաստատուին Ժողովոյ, աւելցնելով սսոնց վրայ, հինգի կը վերածուի Գաղ. Ժողովոյ անդամոց թիւն : Իսկ Մնացեալ ինն իրենց անձնական տիրութիւնն կամ զբաղմունքներն առաջ բերելով, ինչպէս լսեցիք, հրաժարական զրկած են : Կը Մնաց ուրեմն Ժողովոյ, առ այս անօրէնութիւն մ'ընել :

ԹԻՐԵԱԲԵԱՆ Յ. ԷՃ. — Գաղաքական Ժողով կազմելը զժուար գործ է արդարեւ : Անցեալ խորձը ցոյց տուաւ թէ երկիցս եւ երկցս կընտրուին ու կը հրաժարին, եւ ժամանակ եղաւ, ինչպէս գիտէք, որ ամիսներ տեսեց այս հրաժարական : Ինչդիրն : Այս անգամ որ մեր Ս. Պատրիարք Հայրը նոր անցած է իւր պաշտօնի զլուխը, կը յուսալինք որ ընտրեալ մեծարոյ Տեարք աւելի աշխոյժ մը ցոյց տային եւ չվճռեցնէին զխորին Սրբազնութիւնն իւր առաջին քայլերուն մէջ :

● Գաղաքական Ժողովոյ անդամակցութիւնն ընդունողներէն գո՛հ ենք, իսկ գալով հրաժարելոց, կառավարիւմ խնդրել Ս. Պատրիարկէն որ կոչում ընելով նոցա աղագախրութեան եւ անձնուէր գործունէութեան, հրաւիրէ եւ համոզէ որչափանս իրենց աջակցութիւնն եւ ընդունին իրենց յանձնուած այս կարեւոր պաշտօնը :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՃ. — Շատ օրինաւոր եւ բանաւոր դտնելով Թիրեաքեան էֆէնտիքի առաջարկն, կը ձայնակցիմ իրեն եւ կառավարկեմ չուէի դնել զայն անմիջապէս, ինչպէս ինչ մ'առաջ ըրինք Մայր-Նկեղեցոյ Թաղի Երեսփոխանաց համար :

Աղգային Ժողովս ճանչնալով այդ անձանց արժանիքն, ընտրած է զնոսա, լսել է անձնութիւն իւրն մը կը պահանջէ ի նոցանէ, եւ երբ այս պահանջում Աղգային Ժողովէն կուգայ, առաւել եւս պարտ է նոցա ընդունիլ զայն :

ՊԵՎԵԱՆ Յ. ԷՖ. — Կը կրկնեմ :

ԳՈՒՐԳԻՆ Յ. ԷՖ. — (Խօսով իբրև Երեսպետ) Ըստ ամենայնի համեմատ եմ նախորդ Ատենարանից առաջարկութեան : Սակայն և այնպէս, կը խնդրեմ որ Ս. Պատրիարք Հայն հասի բացատրել մեզ թէ ինքն այն հրաժարականաց անդառնալի լինելու մասին համոզում մը զոյացուցած է թէ ոչ, այսինքն մասնակի դիմում մ'ըրած է նոցա ազգասիրութեան, և թէ՛ հնարաւոր է ետ առնուլ տալ իրենց հրաժարականներն :

ՅԱՅՆԵՐ. — Հարկ չ'կայ այդ բացատրութեան :

ՅԱՆԱՊԵՆ Մ. ԷՖ. — Ընդունելով հանդերձ թիրեարեան էֆի առաջարկն, ևս ևս կրտսրարկեմ որչէլ նաև թէ՛ Ս. Պատրիարք Հայն՝ յայտնէ հրաժարելոց որ' եթէ երբևր շընդունին իրենց յանձնուած պաշտօնն, ժողովն ու նոր ընտրութիւն չ'դիտի կատարել :

ՅԱՅՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ : Այդ ատեսի որոշում չ'կրնար արալի :

ՈՒՐԻՇ ՆՍՏԱՐԱՆԵՐԷ. — Քուէ՛, յուէ՛ :

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ընդամենով հանդերձ մերժման առաջարկն, ևս կը վաժարիմ սա յայտարարութիւնն ևս յաւելալ թէ՛ Ազգային ժողովն զխոնարհով հանդերձ նոցա ըլլաողմանց ծանրութիւնն ու ժոմանակի սղութիւնը, կը խնդրէ որ ընդունին այս վաժարիք պաշտօնն ու, ըստ որում կը ճանչնայ անոնց արժանիքն, որոց պատճառաւ իսկ է ոչ ծանրաբեռնեալ են միշտ ազգային կարեւոր պաշտօններով :

ԱՏԵՆԱՊԵՆ ԷՖ. — Նորնորի քաղ. ժողովն հրաժարել թ անդամաց հրաժարոց մասին ժողովոյն կարծիքն բացարձակ է, այն է՛ մերժել հրաժարականներն :

Ուստի իրանն առ այս հետեւեալ բանաձևն կը ներկայէ ժողովոյդ ընդունելութեան :

«Ազգային-ժողովը միաձայնութեամբ որոշելով մերժել նորնորի քաղ. ժողովոյ անդամաց հրաժարականն և յանձնարարելով Ամեն. Ս. Պատրիարք Հօր կոչումն ընել իրենց ազգասիրութեանն և համոզել որ բարեհասնին այս պարագայիս մէջ իրենցմէ պահանջուած անձնըւիրութիւնն ազգասիրաբար յանձն առնելով՝ յետս կոյն իրենց հրաժարականն և դան աջակցել նորին Սրբազնութեան և Երեսպետանական ժողովոյ ջանից, կանցնի իւր Օրակարգին» :

ԱՏԵՆԱՊԵՆ ԷՖ. — (Շարունակելով) Ով որ կընդունի այն բանաձևն, թող հասի իւր ձեռնածիփ հաւտնութիւնն յայտնել :

Քուէարկութիւն կատարուելով, ժողովն միաձայնութեամբ կը ընդունի զայս բանաձևն :

ԱՏԵՆԱՊԵՆ ԷՖ. — (Առ Ս. Պատրիարք Հայր) Սրբազան Հայր, Ազգային ժողովն այն բանաձևի համաձայն՝ կը խնդրէ Ձերդ Բարձր Սրբապետութենէ որ հասի վերադառնալ կոչումն ընել քաղ. ժողովոյ հրաժարեալ անդամաց ազգասիրութեան ստանձնելու համար իրենց յանձնուած պաշտօնն :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Շատ լու :

ԱՏԵՆԱՊԵՆ ԷՖ. — Ուրեմն Տեարք, մեր ատենական զործողութիւնը աւարտած են և ձեռք կառնումք Օրակարգն :

Բ.

Տեղեկագիր ելմտական Յանճնաժողովոյ . — Երազիր Կեղր. Ուղղակի տրոց եւ ելմտա-
ցոյց 1885-86 ամի Ազգային Կեղր. սնտուկի .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր Օրակարգի Երկ-
րորդ խնդիրն է, Ազգ. Ժողովէս կարգեալ Ել-
մտական Յանճնաժողովոյ տեղեկագիրն, ինչ-
պէս նաեւ Կեղր. ուղղակի տրոց մի ծրագիրն
և Կեղր. Մնտուկի 1885-86 ամի ելմտացոյցն :
Սոյն սյաշտանագրերն արդէն նախապէս
տպագրել՝ Երեւոխտանայ բաշխուած և ոնց-
եալ նախին մէջ ալ կարդացուած լինելով՝ Դի-
ւանս առելարդ կը նկատէ անոնց վերաբն ըն-
թեցուածը :

ՁԱՅՆԵՐ. — Այս, հարկ չկայ երկրորդ
ընթեցումն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն առ այս վիճա-
րանութիւնն բոցուած լինելով, կը հրաւիրեմ
Ղերեւոխտանս խօսք առնուլ :

ԹԱԴԻՍՍԵԱՆ Ռ. ԷՖ. — (Բեմն ելելով)
Ելմտական Յանճնաժողովէն պատրաստ-
եալ տեղեկագիրը կարդալով՝ տեսայ որ Կեղ-
րանական տուրք երկու դասակարգութեանց
միայն վերածուեր է, այն է՝ 75 և 25 զրուշի :
Այս, ըստ իս, խիստ գոհացուցիչ կարգա-
դրութիւն մ'է. զի 25 զրուշ վճարողին ան-
գամ երեւոխտանութեան ընտրող լինելու ար-
տօնութիւն կը տայ, մինչդեռ ասիէ առաջ,
օրէնքով միայն 75 զրուշ վճարողին տրուած
էր այդ իրաւունք : Ներկայացեալ տեղեկա-
գիրն մէջ, եթէ զթեցուցիչ կէտ մը կը նըշ-
մալուի, նախ տուրք վճարելու, ասպս քուէի
մասնակցելու սահմանադրական դրութեան կէտ
սա կէտ գործադրութիւնն է : Եւ ասկայն 25
տուրքէ ի վեր հաստատուած մեր օրէնքին շար-
ժում, կենդանութիւն և ողի ապաւ ընտթիւն

ունեցող այս դրութիւն, « դրամի խնդիր » ,
առանց բացատրութեան դործադրութեան դնե-
լու ժամանակն արդէն եկած է : Տուրքը ժո-
ղովրդեան վիճակին յարմարելէ ետք, ընտրո-
ղին կուտուրքը ըստ ամենայնի անբաճարարելի
կընէ : Իրու է որ ասիէ առաջ ընտրողին
տուրք վճարելու խստումը և արտարին տես-
քը միայն բաւական էին զինք քուէի մասնա-
կից ընելու . և ասկայն կար պարագայ՝ յո-
րում ընտրողութեան հանգամանդ ունեցող
բազմաթիւ ընտրողներու քուէն կը մերժուէր,
կար պտրագայ՝ յորում զայն չունեցողներուն
խի կընդունէր : Եւ այս Բնարդ. Ժողովոյ մէկ
երկու աղղեցիկ անդամոյ յԱզգ. Ժողովն դըր-
կելու համար՝ ընտրելի ունենալէն կամ չունե-
նալէն կախումն կուենենար ստէլ :

Տրոց կանխիկ վճարում այս զեղծժանց
դռներ կը մակէ խաղառ . այն որ տուրքը
վճարած է, դատապարտութեան ներքև չէ,
նա օխտի վայելէ իր իրաւունքը . և արդար
խօսելով՝ 20 տուրք տուող մը 10 տուրք տուս
ղին չափ իրաւունք պիտի վայելէ :

Ելմտական Յանճնաժողովին աշխատու-
թիւն զնահատելով՝ անոր եղբակցութիւն
ընդունելէս ետք, թէ գանձելի տուրք բազ-
մադատելու և թէ, ըստ կարելոյն, քուէի
տուաւել ընդարձակութիւն մի տալով զայն
աղղին ամենէն խոնարհ յարկերու մէջ մտքը
նկու դիտմամբ կը մնայ ինձ ինչ ինչ բարե-
փոխումներ առաջարկել, որք են .

Ա. Տրոց մասին թաղերու մէջ մրցում,
ըստ համեմատութեան բնակչոց, իրարմէ ա-
ւելի տուրքի մասնակցող ընտրողք ունենալու
համար :

Բ. 20 Տուրքը (25 զրշ) երկու ոնգամով
չկրցող վճարողներու համայն միայն ամսական
բաժանորդութեան վերածելով՝ թաղերու մէջ
կազմեալ միայուն մասնաճիւղերու միջոցաւ
տասն ամսեայ միջոցի մէջ տասն անգամով
գանձել :

Ինձ կը թուի թէ Տեսես . Խորհուրդը
մրցումը կրնայ անուղղակի մի եղանակաւ բանալ

այսպէս ։ Բոլոր թաղերէ տրոյց ցուցակները ընդունելէ անմիջապէս ետք , պաշտօնական ծանուցմամբ հռչակէ իւրաքանչիւր թաղի տրոյց մասնակցող անձերու հաւարական թիւը , միանգամայն ծանուցանելով 23-35 և 35էն վեր թանաք ունեցող տրոյց մասնակցողներու ընդհանուր թիւը ։ Սահմանադրական տարեվերջին մօտ՝ դարձեալ Տնտես . Խորհրդոյ կողմէն լրատւ տրոյց միջոցաւ ամէն մէկ թաղի տուրքի մասնակցողաց անուանք հռչակուին (առանց տրոյց քանակութիւն յայտնելու) այսպէս . այս ինչ թաղ , որ այսչափ տուրքի մասնակցող թաղ չէցիր ունի , անոնցմէ այս անուան անձինք իւրենց կեղծութեան տուրքը վճարած են . այսքան անձինք զեւ ոչ . նաև ընթերցանելով ծանուցման զայն վճարելով իրենց անուանքը տրավճար անձանց չարքը անցնել տալու մի աղղու յորդոր ։ Բայց աստի աղղարարել թաղ . Խորհրդոյ ամբողջ էլ մտական տարւոյ մէջ տրավճարողաց ցուցակ եկեղեցեաց բանկարն ի տես ամենուն զնել տալ ։

Ձեռնհաս Իշխանութեան կողմէն ոչս պաշտօնական ծանուցումներու յերևան գալէ ետք , բնական է որ ամեն թաղեր ի մասին վճարման տրոյց , զիրար գերազանցելու միջման մ'սխին ։ Յոռանդուն երիտասարդներ անտարբերներուն յորդորներ կարգան իրենց պարտքը վճարելով թաղին վարիչ բարձր պահելու ։ Չտոճում ըսելու թէ՛ թաղերն իրարու հետ դուզակոչող լրագրական լուրջ յորձածներ ոչ նուազ մղում մը կրնան տալ այս մասին ։

Գաղով տուրքի գանձման խնդրոյն՝ զոր երկու անգամով կէս առ կէս կանխիկ վճարելի ընել տայ կ'առաջարկէ Ելմտական Պատ. Յանձնաժողովը , կը խտտովանիմ որ ասի զիրին միջոյ մ'է տուրք գանձելու ։ Բայց ժողովը . դեան գործաւոր դասուն արդի դրամական անձուկ միճակը զիս կը բռնադատէ ուրիշ առաջարկ մ'ընելու ։

Տեսաք Երեսօխտանք , ապաքէն ունինք թաղեր , որոց ընտրողաց մի մեծ մասը , ոչ

թէ 25 դրուչի , այլ նոյն իսկ 75 դրուչի տուրքը՝ ի ներկայանալ իրենց հաւարչին , ստանց ծանուցութիւն մը զգալու , մէկ անգամով կըրնան տալ . և սակայն այն թաղեր իրիտ սակաւութիւ են . կրնամ ըսել լրագրութիւն կը կողմեն ։ Ասոր հակառակ ունինք բազմութիւ թաղեր , որք թէ և տուրք տալու յօժար են , բայց 25 դրուչի տուրքն անգամ երկու անգամով վճարելու անկարող են ։ Հետեւաբար , այս վերջինք , երբ երկու անգամով իրենց տուրքը չըտան , բուէի մասնակցելէ պիտի գրիտին . հետեւար երկու երեք տարւոյ ժամանակամիջոցի մը մէջ պիտի ունենանք հազարաւոր բռնադուրիչ հայեր . և ահա այն ատեն , ինչպիս կը զրկէին երբեմն , բազմաբնակ հայ թաղերու համար կըսեմ , ՎՎ բուէով հոս երեսօխտան պիտի զրկեն , 35 բուէով թաղական Խորհուրդներ պիտի ընտրեն ։ Եւ սակաւաց իրենց իրաւանց դործադրութեամբ Սահմանադրական օրէնք , սակաւապետականի (տակաւ առ տակաւ) պիտի յանգի ։

Տեսաք Երեսօխտանք , թէ ամենէն համեստ օրողչէք ընդունող երիտասարդներ բուէի մասնակից ընել տալու , զանոնք բաշտըրելու և թէ կեղծութեան Մտտուկն այն հատոյթէն չզըրկելու համար կառավարիւմ որ թաղ . Խորհրդոց աջակցութեամբ և Տնտես . Խորհրդոյ վաւերացմամբ , թաղերու մէջ , ըստ բազմամարդութեան թաղին , 3, 5, 7 անդամներէ մնալուն մասնաճիւղեր կազմուին տուրք հաւարելու համար ։ Այս մասնաճիւղերուն բնական անգամ սեպուին նաև այն թաղին մէջ բնակութիւն ունեցող երեսօխտաններն մի կամ երկու անձինք ։ Գործեալ մէն մի մասնաճիւղ իր թաղի մէջ թաղական Խորհրդոյ և Երեսօխտանի ընտրութեան բուէարկի ժամերուն ընտրողական ժողովոյ ընթերցանոց լինի տուրքի յետեւեալ մասը դեռ չվճարողներէն ստահանջելու , և կամ ի մի բան անոնց բուէու , նախ ձեր պարտքեր վճարեցէք , ապա բուէի մասնակցեցէք ։

Գալով 20 տուրքը երկու անգամով չկրցող վճարողներուն համար միայն բաժանորդութեան վերածելու խնդրոյն, կառավարիչեմ որ այդ կարգի անձերէ 20 տուրքը փոխանակ հաւաքիչներու միջոցաւ երկու անգամով գանձելու, մէն մի թողի մասնաճիւղ իր թաղեցիներէն գանձէ 10 անգամով և 10 ամսեայ միջոցի մէջ, յանձնելով վճարողին մէն մի 100 փարան ընդունում ամ տունն, մասնաճիւղէն վաւերացելու մի առժամեայ ընկալագիր :

Երբ 10րդ և վերջին վճարում ընդունին, յայնժամ միայն յանձնարարէ թողին հաւաքչին Աղբ. Վարչութեան Տնտես. Խորհրդոյ կնիքն կրող ընկալագիրը տալ : Բաժանորդութեամբ հաւաքեալ զրոտին 0/1 էն խիտ փոքր բան մը մասնաճիւղերուն թողուի, տետրակներու գնման, առժամեայ ընկալագիրներու տպագրութեան և այլ մանր ծախուց համար : Եւ այս ծախքը Կեդրոնին տուրք գանձելու համար ընելիք 0/0 20 ծախսին մէջ ըլլայ : Գրական պիտոյից համար տեղի ունենալիք այս ծախքը կրնայ Պատրիարքարանն ինք ընելով՝ մասնաճիւղերուն 0/0 էն մաս մը չտալ :

Բաժանորդութեամբ տուրք վճարողներու ընկալագիր ի հարկին տեսնելու են հաւաքիչք. բայ անոր մասնաճիւղերու տետրակներ հաւաքիչներուն տո՛վն բայ լինելու են :

Տեւորք Երեսփոխանք, իրաւ է որ 20 տուրքը միայն չբաւարնելն այսպէս բաժանորդութեամբ հաւաքելը զիւրին եղանակ մը չէ. գուցէ ըստ երկու թիւն շատի զոյանալիք արդիւնք սպառելի աշխատութեան շհամապատասխանել թոտի, սակայն ես կը կարծեմ թէ 10 լըը կամ անկէ քիչ մ'աւելի օրոտչէր ընդունող հաղորուոր արգայի՛նք, որ երկու անգամով իրենց տուրքը չեն կրնար վճարել, բաժանորդութեան վերածման հորհրէ 10 ամսեայ միջոցի մէջ վճարելով գոյն, ընտրութեան պիտի կրնան մասնակցիլ. ըստ ոյում այն կարգի անձինք այսօր իրենց ընդունած համեատ օրական վարձքով իրենց ստոնին պէտքեր ըստ կարի հոչալէ զատ, բաժանոր-

դական մի և նոյն զրութեամբ կը յաջողին անտի բարեկեցութեան ընկերութեանց և բարեպաշտական գործոց մեծապէս նպաստել :

Տեւորք Երեսփոխանք, թէ և ունինք Սոհմանաղլական օրէնք, բայց անոր զօրութիւն բարոյական է միայն, տուրք գանձելու և այլ ինչ ինչ սլորագայներու մէջ կատարելապէս յաջողելու համար, նիթական զօրութիւն կը պակտի Աղբէն : Գալով մեր բարոյական զօրութեան, մեր Եկեղեցոյ օրէնք ի նախնեաց անտի ուսուցած չեն մեզ Աղբ. տուրք չվճարողին ննջեցեալը չթողել, երախայն չմըլըտել, չխոտտովանցունել զայն, հաղորդ չտալ նմա : Կեդրոնը՝ առեւծախի, Նշանոխօսութեան պահուն մէկ երկու տարւոյ տուրք ստնելու համար խտեցելոց պարագայից վրայ քիչ մը կրնայ ծանրանալ, այն ալ, եթէ չեմ սխալիր, ուելի յորդորողի բան ծանրացողի դեր կը կատարէ :

Արդ բանի որ մեր բարոյական իշխանութեան երեսն խի այնչափ պինդ չէ, և ըստ մեր Հայ Ուղղափառ Ս. Եկեղեցոյ չէ կարելի լինել, այլ միայն տուրք չվճարող անհատ, ընտրող լինելէ զրիւելու զօրութիւն մ'ունի, այն ևս, եթէ անխնայ ի գործ վարէ, իր ձեռօք բուէի իրաւունքը սեղմած և անտարբերներ ստեղծած կըլլայ : Ըստ իմ կարծեաց, այսօր 100ին 40ը 75 զրուչ տուրք վճարող է, բայց ոչ հետամուտ քուէի մասնակցելու . 30ը 25 զրուչ մէկ կամ երկու անգամով վճարող մնացեալ 30ը 25 զրուչ տուրքը բաժանորդութեամբ վճարելու կարող է միայն : Եթէ այս վերջնոց թիւն 400ին միայն 5ի յանգէր, ես գարծեալ այն աւաջարիւր պիտի բերէի հոս, սա գիտակցութեամբ թէ՛ հզօր ազգեր խի մէկէն ի մէկ փոքրամասնութեան վրայն կուխել անցնելու կը փարանին : Արդ կը վերջացունեմ անաւտարիս կրինելով՝

10 Տրոյ մասին միջոցով թաղերու մէջ, ըստ համեմատութեան բնակչաց, իրարմէ աւելի տուրքի մասնակցող (ընտրողք) ունենալու համար :

20 Տուրքը, 25 Ղը, երկու անգամով չկրցող վճարողներու համար միայն, ամսական բաժանորդութեան վերածելով՝ Թաղեկու մէջ կաղմեալ մնայուն մասնածիւղերու միջոցաւ տասն ամսեայ միջոցի մէջ տասն անգամով զանձել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թաղէտեսան էֆ.ի առ տենարանութեան մէկ կէտին պատասխանել կուզէ Կիւանս :

Թաղէտեսան էֆէնտի կըմբռնէ թէ Յանձնաժողովն կառաջարկէ որ 25 Ղը, տուրք վճարողն ընտրող լինելու իրաւունքն ստացել: Սոյն ըմբռնումը սխալ է, Յանձնաժողովոյ տեղեկագիրն այսօրինակ առաջարկ մը չի պարունակէր, և ժողովս ալ չի կրնար վաւերացնել նոյնպիսի առաջարկ մը որ բացարձակապէս կը հակառակի Սահմանադրութեան, որ Երեսփոխանական ընտրողներուն իրաւունքն միայն տարեկան զոնէ 75 Ղը, Ազգ. տուրք վճարողին կը վերասպահէ :

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կերկայաց. եալ այն ծրագրին մէկ կէտին վրայ միայն դիտարկելու մ'աւնիմ :

Ազգային տուրքն որքան ալ որ այս անուամբ ձանչուած է, մեր մէջ՝ աւելի իբր կամաւոր նուէր մը կը տրուի : Ուստի կարելի եղած դիւրութիւնն ընծայելու համար վճարողաց և միանգամայն կեդրոնական Սնտուկի հասցեներն աւելցնելու նպատակաւ, կը սխալաբար որ Անդրոնական տուրքը փոխանակ երկու աստիճանի բաժնելու, այսինքն 25 և 75, ինչպէս կառաջարկէ Յանձնաժողովն, բաժնի վրայ սահմանուի, մէն մի բաժին 25 Ղը լինի և ամեն որ ազատ թողլի ուղածին չտի բաժին վճարելու՝ առ այս Սահմանադրութեան տրամադրութիւնն սրահպանելու պայմանաւ :

Ըստ որում տուրքն Ազգային իրաւանց գործադրութեան իրաւունքն կ'ենթադրէ, հետևապէս իբր սլարտը մը պիտի նկատուի այն,

ուստի այն տեսակ արդարութեան և հաւասարութեան հիման մը վրայ հաստատուելու է զոյն որ ոչ ոք կարենայ դանգաժուիլ և դժուարիլ : Իմ այս առաջարկի գործադրութեամբ կարելի պիտի լինի նաև առաջին աստուլ խել մը դժուարութեանց որք միշտ կը ծաղին տրոյ բաշխումն ըսուած խողրէն :

ՃԱՆՈՒՄԵԱՆ Մ. ԷՖ. — (Առեկաղպիք Ելմըտական Յանձնաժողովոյ) Թէ և Յանձնաժողովոյ կողմէն խօսելու պատրաստուած չեմ այսօր, սակայն կուզեմ ըրիչ մը լուսարանել խնդիրն :

Յանձնաժողովս նկատելով որ արոց զանձման մասին Թաղ. Խորհրդոց ջանքերն ցարդ արդիւնաւոր չեն եղած, որոչեց որ Պատրիարքարանի կողմանէ երկու պաշտօնեայնէր չբժին թաղերն և Յաղ. Խորհրդոց աջակցութեամբ իւրաքանչիւր Ազգային անհատի կարողութեան աստիճանն ձանչուողով՝ ըստ այնմ պատրաստութիւն տրոյ ցուցակներն : Իսկ տուրքն որոչախի միայն երկու աստիճանաց վերածելու նաև միակ նպատակն է՝ Պատրիարքարանի մէջ խիտ Էմբլոց մը հաստատուել և հաշուական դրութիւնն աւելի կանոնաւոր վիճակի մը վերածել : Սակայն և այնպէս ինչպէս կերելի, այն երկու որոչ աստիճաններէն աւելի վճարելու զողորք ազատ թողուած են :

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Երազրին մէջ կը տեսնեմ թէ՛ Յանձնաժողովը ուղած է տրոյ խնդիրն ի հիմանց պարզել, զոյն երկու աստիճանի բաժնելով և երկրորդ, Թաղ. Խորհրդոց կողմանէ յարուցեալ դժուարութիւններն թանապու համար՝ մասնաւոր քննիչներ կարգել :

Սրդ, ես կըսեմ, փոխանակ կէս միջոց ի գործ դնելու, կարուկ միջոց մ'ի գործ դնենք, այսինքն 25 Ղը, որոչեւիք Ազգային տուրքն բաժնի վրայ, և ուղղուն որչափ բաժին որ ուզէ, այնքան վճարէ : Այս կերպով, ինչպէս ըրիչ մ'առաջ ալ ըսի, խել մը աւելորդ աշխատութիւններ ալ կը բարձուին :

Ես այնպէս կը հանտատմ թէ իմ այս բարեփոխումս Գանձնաժողովոյ պատրաստած ծրագրին սէ սկզբան և սէ ալ սղուշն չդպչիր և ոչ ալ արգելք մը կընայ լինել զործագրուել լիք հաշուական զործողութեանց :

ՃԱՆՐՄԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը կործեմ թէ՛ թէ՛ մեր և թէ՛ Մէրեէմ-Գուլի էֆ.ի առաջարկներն ալ մի և նոյն եզրակացութեան կը հասնին, այսինքն 25 զրու չիմ դնել և 75ը ըստ Սահմանադրութեան՝ անխախտ պահելով՝ ազատ թողուլ որ ուրոյն աւելի վճարէ անտահման կերպիւ :

ՄԷՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Բայց ևս Ձեր ծրագրին մէջ 75էն աւելի վճարելու տրամադրութիւն չտեսայ :

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Մէր. եւ մ-Գուլի էֆ.ի :

ՃԱՆՐՄԵԱՆ Մ. ԷՖ. — Ըստ որում Գանձնաժողովն ոչոք իւր յատուկ տեղեկարարներն չունի հոս, ինչպէս ըսի թէ մ'առաջ, ուստի կառավարիկեմ որ խնդրոյն վրայ որոշում տողն թողում յաջորդ նստին :

ՁԱՅՆԵՐ. — Ձերմա՛ր յետածգուիլ. Օրուկարգին մէջն է :

ՅՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — 75 զրու Սահմանադրութեան մէջ որդակի նշանակեալ թիւն է, ուստի, բնական էր որ Գանձնաժողովս ատկից տարրեր չիմ մը շէր կընար աւտուլ, մասնաւանդ որ Երեսփոխանական ընտրողաց իւրաւանց սահմանն է այդ թիւն: (Աստ կընքեռուու Երազրիկ նոյն յօդուածն) Եթէ այս 75 բառն խոխաւեմք, չիմք խախտած կը լինինք :

ՅԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Ինչ ձև ալ որ տրուի որոյ խնդրոյն, չիմն սկստք է անխախտ պահել :

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. — Երկու առաջարկներն ալ մի և նոյնն են և միայն բացատրութեան ձևն տարրեր: — Մէրեէմ-Գուլի էֆ.էնտի ալ կուզէ այդ 75 թիւն պահել, բայց միայն 25ի բաժնով, այնպէս որ երեք բաժին վճարողն միայն իրաւունք ունենայ մասնակցիլ ընտրութեանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոյն վրայ բաւականէն աւելի թեր ու դէժ խօսուեցաւ և տեսնուեցաւ թէ կարճէքներն զբոթէ միացած են :

Երազրին վրայ, Մէրեէմ-Գուլի էֆ.էնտի ստաւարին, որ է՛ Կոնստանկ Այգային տուրքը երկու տասիճան ընելու, բաժնի վերածել չի մերթեր Գանձնաժողովոյն առաջարկն, այլ տուրքն զիւրացնելու և ընդհանրացնելու նշարտակու խորհուած է: Հետևարար Գանձնաժողովն կընայ այս կէտիս վրայ համաձայնիլ Մէրեէմ-Գուլի էֆ.ի հետ, որ Գանձնաժողովոյ սկզբունքն հաստատելով հանդերձ՝ տրոյ բաշխման միջոցին հասցիլի ստուակթիւն մը կը ներկայացնէ որ մէկէն ի մէկ այլի չի զարներ: Ձոր օրինակ երբ 25 զրու չիմն կը բաժնուի ուղղային տրոյ, և որ և իցէ ազգային մը որ 25 զրու էն աւելի տալու կարողութիւն ունի՝ 40 զրու վճարէ, եթէ բաժնի վրայ ըլլայ, այն անձը սկստի պարտաւորի 50 զրու վճարել, որով կը տեսնուի թէ՛ Օրոյն 25ի յաւերժ մը կըլլայ ստանց վճարողին զգալի ընելու :

ՅՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Գանձնաժողովոյ ներկայ անդամոյ կործեք կընդունինք Մէր. եւ մ-Գուլի էֆ.ի առաջարկն, բանի որ սկզբունքն սոհարմունած է կըստի :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Մէրեէմ-Գուլի էֆ.ի առաջարկին մէջ սա պարտացն ևս պետք է ճշդել թէ՛ սկզբունք բնու չըլլայի այլ միայն հասցիլներն աւելցնելու համար հանդանակութեան եղանակն կը զիւրացնէ :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, բուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ուրիմն նախ սոյն Մրազրին վիճարանութեան փակումն Ձեր բըւէին կենթարկեմ :

Քուէարկութիւն կատարուելով, ժողովն միաձայնութեամբ ԿՈՐՈՇԷ փոխել վիճարանութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դիւանիս սրտորն է նախ Ձեր քուէին ենթարկել Թաղէսեան Ռէթէոս Էֆ.ի բիւջ մ'առաջ ներկայած բարեփոխեալ առաջարկն, որ հետեւեալն է :

« Ա. Տրոյց մասին միջում թաղերու մէջ, ըստ համեմատութեան բնակչաց, իրարմէ աւելի տուրքի մասնակցող (ԷՊՐՈՒՆ) ունենալու համար :

« Բ. Տուրքը, 25 դրշ. երկու անգամով չկրցող վճարողներու համար միայն, ամսական բաժանորդութեան վերածելով թաղերու մէջ կազմեալ մնայուն Մասնաճիւղերու միջոցաւ տասնամանեայ միջոցի մէջ տասն անգամով գանձել »

Ռ. Թաղիոսեան

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՅ. — Բոյց ոյդ առաջարկն կրնող շունեցաւ, հետեւարար չկրնար քուէի դրուիլ և հարկ է ողղակի ցանձնածողովս յղել ի նկատառումն :

Երեսփոխանք ձայնակցելով Թորոսեան Էֆ.ի սոյն օրինական առաջարկութեան, ըստ ոյնմ Թաղէսեան Ռէթէոս Էֆ.ի սոյն առաջարկն ԿԸ ՅՂՈՒԻ տա ելմտական ցանձնածողովն ի նկատառումն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այժմ կը մնայ Մէրեւէմ-Գուլի Էֆ.ի հետեւեալ առաջարկն :

« Ա. Ազգային կէդր. տուրքն բաժնի վրայ սահմանել :

« Բ. Մէն մի բաժինն 25 դրուշ որով շէլ :

« Գ. Ազատ թողուլ իւրաքանչիւր անհասն ուղածին չափ բաժին վճարելու :

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՅ. — Այդ առաջարկի մէջ աւելցնելու է նաև սա սրարեբութիւնն թէ՛ Սահմանադրութեան սահմանած տուրքին չհասնողը չկարենայ մասնակցիլ Երեսփոխանական ընտրութեան, զի այս արամադրութիւնն անխախտելի է :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Պէտք է աւելցնել նաև թէ՛ Թաղոյին և Երեսփոխանական ընտրութեանց վերաբերեալ յօդուածներն անփոփոխ պահելով :

Սոյն զիտողութեանց վրայ, Մէրեւէմ-Գուլի Յ. Էֆ. հետեւեալ յօդուածն ևս կը յաւելու իւր առաջարկին վրայ :

« Դ. Թաղական և Երեսփոխանական ընտրութեանց համար տրոյց նկատմամբ Սահմանադրութեան արամադրած պայմաններն անեղծ պահել » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Լսեցիք յաւելեալ 4րդ յօդուածն ևս :

Ուրիմն ով որ կընդունի սոյն առաջարկն, թող հասն յայտնել իւր հաւանութիւնն :

Քուէարկութիւն կատարուելով ժողովն միաձայնութեամբ ԿԸ ՆՒՌՈՒՆԻ Մէրեւէմ-Գուլի Յ. Էֆ.ի չորս յօդուածէ բաղկացեալ առաջարկն :

ՄԵՐԵՎԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Քանի որ իմ առաջարկ ընդունուցաւ ժողովէդ, ուրեմն բնականապէս հարկ կըլլայ Մրազրին մէջ բաժին սահմանող արամադրութիւնք ըստ ոյնմ բարեփոխել :

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Քանի որ խմբազորութեան վրայ է խնդիրը, լաւ կը լլայ վաւերացնել այդ Տրոյ կանոնադիրն և գործադրութիւնն արտօնել, խմբագրութիւնն ի վերջոյ կարգադրելու պայմանաւ Յանձնաժողովոյ ձեռամբ. վասն զի Ձեր Երևական Յանձնաժողովն այսօր միայն իւր աշխատութեանց մէկ մասն կը ներկայէ ժողովոյդ և տակաւին ընելիք գործեր ունի, ինչպէս են՝ Պատրիարքարանի ներքին բարեկարգութիւնն, հաստիքոյ նորանոր աղբիւրներ գտնելու խնդիրն և այլն :

Ուտի եզրակացնելով, կառավարիչեմ այդ Մրագիրն վաւերելով յղել Յանձնաժողովոյս, որ հարկ եղած խմբագրական սրբագրութիւնքն ընելով գործադրութեան ղէն զայն :

Իրեախօսանք կրինելով Թորոսեան Յ. Է. Ֆէնտիի այն առաջարկն, Առենապետ Է. Ք. ըստ այնմ ժողովոյ քուէին կենթարկէ Եւրասիական Յանձնաժողովոյ Մրագիրն ի մասին Կեդր. Ուղղակի արոյ, հանդերձ Մէրեմ-Փուլի Յ. Է. Ֆի. կողմանէ առաջարկել բունածնով, զոր ԿԸՆԴՈՒՆԻ և ԿԸ ՎԱՍԻՐԷԷ :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ելմտական Յանձնաժողովոյն երկրորդ աշխատութիւնն է՝ Աղղային Կեդր. Սնտուկի 1885-86 ամի Ելմտացոյցն որ այժմ մեր սեղանին վրայ պտարտատ կը կենայ :

Նժէ ժողովդ ո և է դիտարկութիւն չունի այդ Ելմտացոյցի վրայ, զայն ևս Ձեր վաւերացման կենթարկեմ :

Ձայս ասելով Առենապետ Է. Ֆէնտի խոջովոյ քուէին կենթարկէ Աղղային Կեդրոնական Սնտուկի 1885-86 ամի Ելմտացոյցն, զոր ԿԸՆԴՈՒՆԻ և ԿԸ ՎԱՍԻՐԷԷ առանց ո և է դիտարկութեան և կը յանձնէ զայն առ Աղղ. Վարչութիւն ի գործադրութիւն :

Գ

Առաջարկութիւն Աղղ. Վարչութեան յաղագս Երուսաղիմայ պարտուց բարձման խցն զրոյ .

(Սոյն պահան Ա. Առենապետ Եուսաֆեան Է. Ֆէնտի իւր Աթոսը Բ. Առենապետ Թորոսեան Յովհաննէս Է. Ֆէնտիի թողով պահմը ժողովարանէն կը հեռանայ)

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս զիտէք, մեր Օրոնարգի երկրորդ խնդիրն է՝ Աղղային Վարչութեան մէկ տեղեկագիրն ի մասին Երուսաղիմայ պարտուց բարձման խնդրոյ :

Առենապետի Է. Ֆէնտի կընթեռու յիշատակեալ տեղեկագիրն :

Վսեմաչուք Առենապետ Է. Ֆէնտի Աղղ. Երեսփոխանական ժողովոյ

Աղղային ժողովն Երուսաղէմի Ս. Աթոսն այստուց բարձման մասին Խառն ժողովոյ կողմէ 1884 Յունիս 30 թուականաւ մատուցեալ տեղեկագիրն նկատուածեան առնելով՝ իւր 1885 Փետրուար 1ի նստի մէջ սոյն խնդրոյն վրայ Առենապետաց Դիւանին ներկայացուցած տեղեկագրոյն եզրակացութիւններն ընդունած, և յանձնարարած էր Աղղ. Վարչութեան ի գործ ղենել Երուսաղէմի պարտուց բարձման համար առաջարկուած տնօրէնութիւնն, պարտաւորիչ գործերով նաև Պոսոյ ազգայնոց վճարելիք բաժինն :

Աղղ. Վարչութեան Խառն ժողովն Պատկ. ժողովոյդ սոյն որոշման և յանձնարարութեան վրայ՝ ձեռք առաւ անմիջապէս խնդիրն, և նկատելով որ սոյն

պարտուց բարձման համար սահմանեալ անօրէնութիւնն բաղմակողմանի պարագաներ ունէր և զայն գործադրել՝ Վարչութեան տեղեկագրին մէջ նախատեսեալ այլ և այլ միջոցներու կիրառութեամբն, ընդարձակ աշխատութեան կարօտ գործ մ'էր և արժանի մասնաւոր և անգուլ մտադրութեան, Ազգային Վարչութեան խառն ժողովն Յանձնաժողով մը կազմեց, պաշտօն տալով անոր Ազգային ժողովոյ որոշման բանաձևին համաձայն՝ պարտ ու պատշաճ կարգադրութիւններն ընել, նպատուից հաւաքման համար Գանձուց պաշտօնատան հետ սկսուած բանակցութիւններն շարունակել, գրամն գանձել, Ս. Աթուռոյն պարտքերն հատուցանել, յառաջիկային մէջ այլ ևս պարտք չգոյանալու համար պէտք եղած միջոցներն որոշել բանակցելով Երուսաղէմի Ամեն. Ս. Պատրիարքին հետ, և Վարչութեան հարրգել իւրաքանչիւր վեց ամիս իւր գործողութեանց համարն ևս մատուցանելով:

- Յանձնաժողովոյ անդամ կարգեցան,
- Գեր. Տ. Մատթէոս Ս. Եպիս. Իզմիրլեան
 - Վսեժ. Յովհաննէս էֆ. Նուրեան
 - » Սեպուհ » Մաքսուտեան
 - Ս.Նն. Բարսեղ » Հալաճեան
 - » Սնեքերիմ » Մանիկեան

Յանձնաժողովն իր մէջ խնդրուած սոյն կարեօր ծառայութիւնն մատուցանելու համար առ Ազգն, և իւր թանկագին աջակցութիւնն առ Վարչութիւնն թէև յօժարեցաւ ըստանձնել տոյն պաշտօնն, և գործին նախապարտատական աշխատութեանց ձեռնարկեց, սակայն Ազգ. Վարչութիւնն Յանձնաժողովոյ ներկայացուցած զիտողութիւններէն համողուցաւ թէ՛ այս ընդարձակ գործին պէտք

եղած մղումն և փափաքուած կանոնաւորութիւնն տարու համար բաւական չէր միայն Յանձնաժողովոյ մը վերագրել զայն, և ընտիր տարրերով կարմակերպել Յանձնաժողովն, ինչպէս Ազգ. Վարչութիւնն յաջողած էր ընել. այլ հարկ էր միանգամայն գործին մեծութեան աստիճանին համեմատութեամբ ընդլայնել անոր ձեռնհասութեան շրջանակն, լիազօր իշխանութիւն աւանդել անոր՝ իւր գործառնութեանց պատասխանատուութիւնը վերագրելով Իրեն, զնել զայն ուղղակի Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր Նախագահութեան ներքև, ինչպէս էր Նախորդ Յանձնաժողովն, և ուղղակի համարատու կացուցանել առ Ազգ. ժողովն իւր կատարած գործառնութեանց համար, և այսպէս զայն գործօն վիճակի մէջ զնել, Բայց այս նկարագրով Յանձնաժողովոյ մը կազմութիւնն Ազգ. Վարչութեան խառն ժողովն վեր գտաւ իւր ձեռնհասութեանն, և Ազգ. Երեսփոխանական ժողովոյ հեղինակութեան և որոշման կարօտ համարելով զայն կը փութայ խնդրոն ներկայել Պատմի. Ժողովոյ ուշագրութեան և յիշեցնելով գործին ստիպողականութիւնն և փափուկ հանդամանքն, որ արդէն ծանօթ են ժողովոյդ, ինչդրել որ բարեհաճի այս մասին պարտ ու պատշաճն որոշել, որպէս զի կարելի լինի գործն յառաջ տանիլ յաջողութեամբ և օրինաւորութեամբ և փափաքուած արդիւնքն ձեռք բերել:

Մասնք յորդանօք

Ի դիմաց կրօնական ժողովոյ

Վ. Ատենադպրի Ատենապետ

Տ. Վրդ. Ռսկաեան Խորեն Արք-Եպիսկոպոս

Ի դիմաց քաղաքական ժողովոյ

Վ. Ատենադպրի Ատենապետ

Պ. Պապօեան Ս. Մարտառեան

23 Մայիս 1885

Կ. Պոլիս

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՏ. — (Խօսելով իբրև Երեսփոխան) Այս անդեկագիրը կուգայ մեզ Ազդոյնի վարչութեան Քաղաքական և Կրօնական Ժողովներէն. բայց հաս լիագորութեան հարկն քայտարող մանրամասնութիւնք չկան : Աստի փոփոքելի էր մեզ զիտնալ նախ, որ շարհ հար է, թէ ի՞նչ են այն պատճառներն որոնցմով վարչութիւնն այսօր այս տեսակ առաջարկ մը մեզ ներկայեցու հարկին մէջ կը կը դնուի, որպէս զի Երեսփոխանութիւնս ալ կարենայ զխտակցութեամբ տալ զիւր քուէն :

Բայ տասի, ըստ որում նոր Բաղաբաւ կոն ժողով մը պիտի ունենամք, որոյ ուղղութեամբ ինն այս խնդրոյն մէջ թերևս տարրեր լինի իւր նախորդին ուղղութեանէն, ըստ իս, ըստ կըլլայ մի անգամ լսել նաև սորա կարծիքն ալ և ապա յանգիլ վերջնական որոշման մը :

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՏ. — Ես եւս պիտի ձայնակցեմ Գուրգէնի էջի : Հարկ է զիտնալ թէ լիագորութիւնն այսօր թէթեւ գործ չէ և Ազգին այս դերտգոյն մարմինը չկրնար այդ տեսակ աշտոնութիւն մը տալ, առանց իրեն զրոյն բոլոր պարագայներն ուսումնասիրելու, մանաւանդ որ այդ պայտնով կարգեալ Յանձնաժողովք ունին ժամանակ վախարաւած որդիներն ձեռք բերած չեն :

Եթէ, որդարև, Յանձնաժողովն իւր այս մեծ ձեռնարկին մէջ դժուարութիւններ կը տեսնէ, պարտի յայտնել մեզ, որպէս զի Երեսփոխանութիւնս ալ կարենայ համազում մը գոյացնել և ըստ ունի իւր որոշումն տալ :

Իսկ այժմ, ինչպէս զիտե՛ս տուա Գուրգէնի էջէնտի, բանի որ նոր Բաղաբաւական Ժողով մը կայ, որոյ ուղղութիւնն թերևս իւր նախորդին ուղղութեանէն տարբեր ըլլայ, հարկ է խնդիրն սակիս թողուլ և անոր կարծիքն ալ լսել : Ես չեմ կարծեր որ մեր որոշումն 1-2 շաբաթ ևս յետաձգելով վնասուինք, քանի որ այսօրն տարիներէ ի վեր կապուածք :

ԻԶՄԻՐԵԱՆ Տ. Մ. ԵՊՈՍ. — (Իբր Յանձնաժողովոյ անդամ բեմմ էլեելով) Չեմ գար

Ձեզ բացատրութիւններ տալ, Տեարք, յանուն վարչութեան, զի չեմ նորա ներկայացուցիչը, այլ իր անդամ Յանձնաժողովոյ կը վախարիմ բացատրել Ձեզ այն խոչընդոտներն որք էլան իւր զէմ և տեղի տուն իրեն խոչընդել որ աւելի ընդարձակի իւր գործեցող սահմանն :

Վարչութեան կարգեալ Յանձնաժողովն, իւր այժմեան զիրքին մէջ ամեն առթիւ պիտի հարկադրի Խառն Ժողովոյն զիտնել և Նորա կարծիքն ու արտոնութիւնն ստանալ, վասն զի երբ այս մանրամասնութեանց համար կը զլուսնէք Ս. Պատրիարք Հօր, Նա իրուամբ կը սէր թէ՛ « Ես ուխտ ըրած եմ հաւատարիմ մնալ Սահմանադրութեան, հետեաբար պարտիմ Խառն Ժողովոյ կարծիքն ալ առնուլ : » Արդ, ըողմողիմ են իւր աշխատութիւնք, բանակցութիւնք կան Ելմասկան Նախարարութեան հետ, բանակցութիւնք Քառասական Իշխանութեանց հետ և այլն : Միւս կողմէ, արագ գործելու հարկ կայ և կարելի չէ սոյտնել որ մեր տեղեկագիրք զիտնին Խառն Ժողովոյ սեղանին վրայ իրենց կարգին որոշում ստանալու համար : Աստի Խառն Ժողովն այս դժուարութիւններն շարժելու նպատակու, որոչեք լիագորութեան արտոնութիւն խնդրել Ազգային ժողովէդ :

Գիտեմ, Տեարք, թէ լիագորութիւն բառն է որ կը խորոչեցնէ զՁեզ, այլ պէտք է իւր բուն նշանակութեան վերածել զայն, զի կուգասի Պատուոց բարձման Յանձնաժողովն նկատել իր Խորհրդարանական Յանձնախումբ մը Ազգային ժողովէդ կարգեալ և Ազգային Ժողովէդ պատասխանատու : Լիագորութիւն կը խնդրուի իւրաքանչիւր տարւոյ վերջ գործաւնութեանց համարառութիւնը Ձեզ բերելու պայմանու, վասն զի հաշուական գործ է այս, ստակ առնելու և ստակ տարու խնդիր, և անսահման լիագորութիւն մը ոչ կրնայ տրուիլ և ոչ ալ այդ կերպով պայտած ընդունող անձինք կրնան գտնուիլ :

Իրոց այս միտակին մէջ հարկ չի մնար կարծեմ, նոր Բաղաբաւական Ժողովոյ Դրօշու

Թեան սպասելու : Ս. Պատրիարք Հայրն ևս համաձայն է բերուած առաջարկին , որ եթէ ընդունուի , նորին Սրբազնութիւնը պիտի նախադասէ Յանձնաժողովոյ նիստերուն այնպէս որպէս կը նախադասէ Վարչութեան և Նորա սրբազնեան ստորագրելով գործադրութեան պիտի դնէ :

Խնդիրն ստիպողական է , Տեաքք , և եթէ Յանձնաժողովն իր Ս. Նախադասով չկարենայ տնօրինել և գործադրել Երուսողէմայ պարտոսց բարձման միջոցներն , այդ պարտքը գում բան զգում կը բարդի փոխանակ նուազելու և հետևանայ ծանրութիւնը չափել դիւրին է :

Այժմ այսչափ բացատրութիւն բու կը համարվի , և սրատրոստ եմ պատասխանել ուրիշ դիտողութեանց ևս , եթէ տեղի ունենան :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Իզմիրեան Աբրահամի բացատրութիւններէն կրցածք կարծիք գոյացնել թէ՛ արդարև դժուար է Յանձնաժողովն գործել և եթէ իւր գործերը սահմանը չընդարձակեմք : Ուստի ևս պիտի ընդունիմ Վարչութեան բերած այս առաջարկն , սոյս մանու որ նա իւր միտման գործոց համարը բերէ այս ժողովին և գումարի ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր :

ԹԻՐԵԱՔԱՆԵԱՆ Յ. ԷՖ. — Ի հարկէ Իզմիրեան Աբրահամի խօսքերէն կերևի թէ լիազօրութիւն բաւը չառ ծանր է և ինքն ալ զգաց զայս : Թէև բառակոն կը թուի այս զիտուութիւնս , բայց սէտք է գիտնալ թէ բուն խնդրոյն ոչին անոր մէջն է :

Այժմ մէկ կողմ թողով այդ լիազօր բառն , ևս ուլ կընդունիմ Իզմիրեան Աբրահամի առաջարկն թէ՛ ընդարձակելով նորա գործունէութեան սահմանն տարուէ տարի իւր համարն բերէ հոս և գումարի ն. Սրբազնութեան նախադասութեամբ :

Արդէն Սրբազան Պատրիարք Հայրն մեծ գործունէութիւնն ցոյց կուտայ և կը յուսամք

որ իւր օրով տեղի արդիւնաւոր քայլեր առնուին . բայց որովհետև նոր Քաղ. Ժողով մ'ալ կայ , ինչպէս ըսի քիչ մ'առաջ , ուստի հարկ է կարծեմ խնդիրն 1-2 չարաթ կառուցել և անոր կարծիքն ալ առնուլ , զի թեև ըսեալ , սո ալ , կրնայ ըլլալ սր նոր առաջարկ մը բերէ :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Լուսնոյ յետոյ Իզմիրեան Աբրահամի բացատրութիւններն , ևս խի բու կը համարվի որ Յանձնաժողովն իւր միտման համարառուութիւնն բերէ հոս . զի այս կերպիւ լիազօր բառն ալ կը կորուսանէ իւր սրամտական խառութիւնն . վասն զի փորձով դիտելք թէ տակոյ առաջ չառ Յանձնաժողովներ լիազօրութիւն վարելոյն , բայց յստիտեան կողմն : Սակայն և այնպէս նոր Քաղաքական Ժողովոյ կարծիքն ևս առնուլ համար Այժմ որ ևս սպասելն կարծեմ կարելոր է :

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Նոր Քաղաքական Ժողովոյ կարծիքն առնուլ համար սպասելու հարկ չեմ տեսներ ևս , վասն զի չինն և նորն ալ մի և նոյնն են մեզ համար :

ԻԶՄԻՐԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Թիրեաքեան և Գուրգենէ կիկնոսիք կը պնդեն որ նոր ընտիր Քաղաքական Ժողովոյ ևս ներկայացուի այս խնդիր և նորա կարծիքն ևս առնուի :

Կընդունի արդեօք ժողովոյ որ բոլոր նախորդ խնդիրներն ալ նոր Քաղաքական Ժողովին գործունէք և անոր հետևութեանն են թարկեմք : Քիչ մ'առաջ ինչո՞ւ բուձարկեցինք Երուսաղոյն , Տրոյ Կատանաղերն . եթէ այդ խնդիրներն ալ պիտի վերադարձնեմք սու այն , յայնժամ միայն կրնամք զոյս ալ գործնել , խի եթէ դոմանս պիտի դարձնեմք և դոմանս ոչ , կարծեմ վարչական սխալ մը դործած պիտի լինիմք :

Խնդիրն ստիպողական է կըսել շիչ մ'առաջ , եթէ Յանձնաժողովն այժմէն չկարենայ իւր Ս. Նախադասով գործի սխալ , Երուսաղէ

մայ պարտքն զամ բան զգամ պիտի աւելնայ
փոխանակ նուազելու :

ԹՅԿՐԵԱՆ Ա. ԷՖ. — Ասկից երեք շա-
բաթներ առաջ այս խնդրոյն վրայ հարցում
մ'ըրած էի , որոյ պատասխանն այսօր լռել-
եայն կուգայ մեզ : Բայց բանի որ կը յայտա-
բարտի թէ Յանձնատողոյն իւր համարն պիտի
բերէ այս ժողովիս , ես իսկ հարկ չեմ տես-
ներ նորընտիր Քաղ. Ժողովոյ կարծիքն առնե-
լու և կառավարիւմ արտօնել Յանձնատողոյն
ի գործ , վասն զի գաւառացիք այսօր իրենց
աչքն յառած են Պօլսոյ վրայ՝ տեսնելու համար
թի՛ , այս վերջինն ի՞նչ կերպիւ պիտի մատ-
նակցի այդ պարտուց վճարման , բանի որ Պօլ-
սեցիին պիտի տայ առաջին օրինակը :

ՁԱՅՆԵՐ . — Քուէ՛ , բուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ եղած դիտողու-
թիւնք և տրուած բացատրութիւններն բու-
կը համարի ժողովք , վիճարանութեան փա-
կումը բուէի պիտի դնեմ :

ՁԱՅՆԵՐ . — Այ՛ , բաւական է :

Հետեւաբար բուէարկութիւն կատարուե-
լով , ժողովն Չ բուէի դէմ միաձայնութեամբ
ԿՈՐՈՇԷ փակել վիճարանութիւնն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այ՛ ժ՛մ խնդրոյն աս
կէտն Ձեր բուէի պիտի դնեմ թէ՛ ժողովք
կո՛ւզէ այսօր իսկ լուծել խնդիրն թէ՛ չէ սղա-
սել՝ նոր ընտիր Քաղաքական Ժողովոյ կար-
ծիրն ևս առնլու համար :

Սոյն երկու առաջարկներն ևս ուրոյն ու-
րոյն բուէի դրուելով , ժողովն և բուէի դէմ մի-
աձայնութեամբ ԿՈՐՈՇԷ այսօր իսկ լուծել խն-
դիրն , առանց սարակելոյ նոր ընտիր Քաղ. Ժո-
ղովոյ կազմակերպութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փանի որ ժողովք մե-
ծամանութեամբ որոշեց խնդիրն այսօր իսկ
լուծել , հարկ է ՚Եւանիս՝ Վարչութեան կող-
մանէ եկած առաջարկին , հանդերձ Իզմիր-
լեան Սրբազանի բացատրութեամբ Ձեր քուէին են-
թարկել :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Քուէարկութե-
նէ առաջ խօսք կուզեմ՝ այդ երկրորդ կէտին
վրայ : Խնդիրն լուծ բանի մը վրայ է : Այս ա-
ռաջարկ ուրիշ բան չընտանակէր եթէ ոչ
Յանձնատողով մը ընտրել , որոյ վարչօրո-
թիւնն մի միայն Ազգ. Վարչութեան նկատ-
մամբ է , այլ միշտ պատասխանատու առ Ազգ.
Ժողովս : Պարզասէս Երուսաղիմայ Պարտուց
Բարձման Կարգադիր Յանձնախումբ մ'է որ
կաղմած պիտի ըլլայ ժողովս : Ուրեմն , իբր օ-
րինակն ձեռակերպութիւն , հարկ է որ այն
Յանձնատողովոյ ընտրութիւնն ալ կատարուի
Ազգային Ժողովէս , որ անշուշտ պիտի հաս-
տատէ Վարչութեան ընտրութիւնն : Եւ մի-
անգամայն կառավարիւմ որ ի իշխութիւն
գործոց , Յանձնատողովոյ Յանգամայն վրայ ա-
ւելցուին նաև Չ անդամք :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲ-ԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՏ . — Խառն
Ժողովն կընդունի որ դուք կատարէք Յանձ-
նատողովոյ ընտրութիւնը և կամ վերահաստա-
տէք , ինչպէս որ կուզէք : Ձեր Վարչութեան
միակ փախարն եղած է Յանձնատողովն ազատ
թողուլ գործելու առ ի բարձունս Ս. Երուսա-
ղիմայ պարտուց :

Ազգային Ժողովք ինքն է տէր Ազգային
բոլոր ընչից և կալուածոց և ամէն պարագա-
յի մէջ , ինչ ձևով ալ որ կատարուած ըլլայ ,
Յանձնատողովոյ կազմութիւնն , ինքն իրաւունք
ունի հարցում ընելու և համար պահանջելու
ի Նմանէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժամէ՛ արդ , որ Յանձ-
նատողովոյ այն առաջարկն , հանդերձ Իզմիր-
լեան Սրբազանի բացատրութեամբ , ժողովքդ
բուէին ենթարկեմ :

Հեռուարը բուհարիութիւն կատարուելով, ժողովն միաձայնութեամբ կՈՐՈՇԷ՛

Լիազօրութիւն տալ երուսաղէմայ պարտուց բարձման կարգադիր Յանձնաժողովոյն պայմանաւ որ գումարուի ընդ Նախագահութեամբ Ամեն Ս. Պատրիարք Հօր, և ա՛մ ըստ ա՛մէ իւր գործանուութեանց համարն և հաշիւն ներկայէ առ Ազգ. Ժողովն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ՝ Երուսաղէմէն էֆ.ի առաջարկն, որ է՛ երուսաղէմայ պարտուց բարձման կարգադիր Յանձնաժողովոյ ընտրութիւնն ևս կատարել Ազգային Ժողովէն և միանգամայն ի զլուրութիւն գործօրծ, հինգ անդամոյ վրայ աւելցնել նաև երկու անդամը :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲ-ԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — Շոտ իրաւացի է Երուսաղէմէն էֆ.ի առաջարկն. քանի որ Ազգային Ժողովն ստանձնեց զոյս գործ, պէտք է որ կարգադիր Յանձնաժողովն ևս իրմէ բղիտի :

Յամենուստ Երեւոյիստեք ձայնակցելով Նար-Պէյ Սրբազանի ի մասին ընդունելութեան Երուսաղէմէն Տ. էֆ.ի առաջարկի, Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ զայն, որ կՐՆԴՈՒՆՈՒԻ ձայնից ստուար մեծամասնութեամբ, հետեւաբար կՈՐՈՇՈՒԻ՛

Երուսաղէմայ պարտուց բարձման կարգադիր Յանձնաժողովոյ 7 անդամոյ ընտրութիւնն կատարել ի ձեռն Ազգային Ժողովոյ, Մայր Գլուանի կողմանէ պատրաստեալ ընտրելոց ցանկին վրայէն :

Գ. Բացախայրիւն

Երեսօրհաններէն՝

Գարրիէլ	էֆ.	Նորատունկեան
Գրասպար	»	Զերայլ
Նշան	»	Պոյաճեան
Սինեքերիմ	»	Մանուկեան
Համարձու՛մ	»	Մագարուէան
Միքայէլ	»	Մամիրոնեան
Սիմօն	Պէյ	Մաքսուտեան
Կարապետ	էֆ.	Հաղարեան
Յովհաննէս	»	Նուրեան
Ռէթէոս	»	Պէրօլէրեան
Կարապետ	»	Իւթիւճեան
Կարապետ	»	Երէջեան
Ստեփանն	»	Փափաղեան

Ժողովոյ սցսօրեայ նիստէն երրորդ րոպակայ յաթիւն ունեցած լինելով, Ատենապետ էֆ. սոցա անուանին Ժողովին կը հաղորդէ և կը յայտնէ միանգամայն թէ՛ յաջորդ նստին ըստ օրինի կոչնադիր պիտի յղուի անոնց :

Ատեանն կը վերնոց ժամը Զին, յաջորդ նիստն 15 օրէն գումարուելու որոշմամբ :

Ատենադպիր Ատենապետ
Տ. ԳՈՒՐԳԷՆ Տ. ԵՈՒՍՈՒԹԵԱՆ

Ն Ի Ս Տ Ե

5 ՅՈՒՆԻՍ 1885

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ

ԿԵՂՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆՔ
ԵՆԵՐՅԱՆԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպոս Սէֆէրեան
- 2 Արիստակէս Եպիս. Կերձակեան
- 3 Գէորգ Վրդ. Իւթիւճեան
- 4 Խաչատուր Քահ. Տ. Գարրիէլեան
- 5 Խորէն Արքեպիսկոս Կար-Պէյ
- 6 Մատթէոս Եպոս. Իզմիրլեան
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան Բ Պ
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ 2
- 9 Յակոբ Վ. Ա. Փարիզեան Բ 2
- 10 Խորէն Քահ. Փէհլիզանեան Բ
- 11 Ոսկի Քահ. Օհանեան
- 12 Յովհաննէս Քհչ. Շահպաղեան
- 13 Եղիշէ Վրդ. Այվաղեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Քհ. Տ. Արքայեան Բ Պ
- 16 Վահան Քհչ. Գրիգորեան

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվաղեան
- 18 Գարեգին » Փարթարեան Բ 2
- 19 Սուքիաս Քահ. Ստեփանեան Բ
- 20 Գարրիէլ » Խանճեան

- Բ Բացակայութիւն տառչին :
- 2 » Երկրորդ :
- Պ » բանաւոր պաճառաւ :

ԵՅԵՐԵՎԱՆԻ

Ա. Վիճակ

- Գոռմ-Գաբու, Կետիկ-Վարաւ.
- Եւ Գոռմ-Գաբուի զուրս
- 21 Յակոբ Գուրգէն
- 22 Յ. Մէրեմ Գուրի
- 23 Մինաս Ձերազ Բ Պ
- 24 Խաչիկ Կամարական Բ
- 25 Միհրան Վարդազարեան Բ
- 26 Մկրտիչ Կերձեան Բ
- 27
- 28
- 29
- 30
- 31
- 32
- 33
- 34
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ

- Պեղիկբաղ
- 38 Բարսեղ Հալաճեան Բ 2
- 39 Յովհաննէս Քէրէստէճեան
- 40 Մեղրոն Պարոնիկեան
- 41 Մարուպէ Ճրէնիկեան Բ Պ
- 42 Պօղոս Էնքսէրճեան Բ 2
- 43 ակօր Պօշակեան
- 44

Իսկիլուար Ս. Խաչ

- 45 Սիմէօն Ֆէլիկեան Բ Պ
- 46 Գարրիէլ Նորատուհիկեան Բ 5

- 47 Գասպար Գասպարեան Բ 2
- 48 Գրիգոր Ձիթճեան

Իսկիլուար Ս. Կարապետ

- 49 Պօղոս Թորգոմեան Բ 2
- 50 Տրդատ Փարիզեան Բ 2
- 51 Յակոբ Հաճիեան Բ 2
- 52 Միհրան Սէթեան Բ Պ
- Գ. Վիճակ
- Գասքմ-Բաղա
- 53 Գասպար Ձերազ Բ 5
- Բերա
- 54 Գրիգոր Ալլիսիլէճեան Բ 2
- 55 Ղազար Հովոսեան
- 56 Յարութիւն Պէլիեան Բ 4
- 57 Նշան Պօյաճեան Բ 4
- 58 Վիչէն Օրմանեան
- 59 Սինըրիս Մանուկեան Բ 3
- 60 Համարձու Մաղպուտեան Բ 3
- 61 Մանուկ Այվանեան Բ 2
- 62

Միլազղիղ

- 63 Տիգրան Եուսուֆեան
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ 2
- 65 Մկրտիչ Նանրմեան
- 66 Ստեփան Տամատեան
- 67 Յարութիւն Նորատուհիկ. Բ
- Պեղիզօ Եւ Ղալարիա
- 68 Միլազլէլ Մատիկոնեան Բ 3
- Գ. Վիճակ

Քուղիուճնուր Եւ Իճաթիէ

- 69 Մկրտիչ Մէղպուրեան Բ
- 70 Սիմոն Մաքսուտեան Բ 5

Գատըզիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Նիկոմիդիա
71 Գաննիկ Յօղակիմեան Բ		120 Կարապետ Սուրբուհեան Բ 3
72 Կարապետ Հաղարեան Բ 5	Ա. Վիճակ Զմշկածագ	ԱԿԸ 121 Յակոբ Գորեան
Նարըլը-Գաբու	101	Ղարանիսար
73 Միհրան Տէօքմէճեան Եհնի-Մամալլի Սամարիոյ	Գաղատիա 102	122 Կարապետ Երէցեան Բ 3 Արաբկիբ
74 Թօփ-Գալուս	Ատանա 103	123 Կարապետ Խաչիկեան Բաղէշ
75 Յարութիւն Թրեաքեան Բ Էյուպ Ս. Եղիա Ե. Ս. Աստուածածից	Սդերդ 104 Մատթէոս Ալէքսանեան Բ 2 Եօղատ	124 Արփիար Արփիարեան Գ. Վիճակ
76 Գուրուս-Զեշմէ	Մարաիա 105	Թեքիբուղ 125 Տիգրան Գ. Սինանեան Բ 2 Կեսարիա
77 Կարապետ Սրզմեան Բ 2 Հիսար Ե. Պոյաճի-Գիւղ	106 Գէորգ Վարդանեան Բ 2 Իզմիր	126 Խարբերդ 127 Պալքբէք
78 Նոր-Գիւղ Ե. Սրեմիա	Եգիպտոս 108 Աբրահամ Մուրատեան Բ. Վիճակ	128 Ստեփան Գօլօշեան Բ Մուշ
79 Սէպուհ Տէմրճիպաշեան Պայատ	Պրոսա 109 Բրիտտոսուր Դաղարոսեան Բ Պ	129 Ստեփան Փափաղեան Բ 3 Տիվրիկ
80 Մկրտիչ Կիւմլուշեան 81 Ռէթէոս Թաղէոսեան 82 Ներսէս Երէցեան Բ 3	Եւդոկիա 110 Կարապետ Կիւրճեան Բ Պ Ամասիա	130 Նշան Գարադաշ Զէյրուց Ե. Մարաշ
Քարակէօձրիւկ	111 Համբարձում Ալաճաճեան Բ 2 Բալուս	131 Տրապիզօն 132 Ե. Վիճակ Պաղտատ
83 Յովհաննէս Թորոսեան 84 Կարապետ Փանոսեան Բ 2	112 Եղեսիա 113 Յակոբ Իւթիւճեան Բ Մանճըլլի	133 Կարապետ Սէթեան Տիգրանակերտ
Ե. Վիճակ	114 Հաճըն	134 Միհրան Զօպանեան Բ 2 Վան
Սամարիա	115 Երզնկա 116 Ռեթէոս Պէրպէրեան Բ 3 Գ. Վիճակ	135 Մարկոս Աղաբէգեան Բ 3 Աղբամար 136 Հալէպ Ե. Այնբապ 137 Սեբաստիա
85 Յակոբ Արշակ 86 Նիկոնիս Նուրեան Բ 4 87 88 89 90 91 92 93 94	117 Սերովբէ Աշնաւորեան Քեօրանէա 118 Աւետիս Թընկերեան Աղբիանուպօլիս	138 Մկրտիչ Յ. Մէլիբեան Ռուսմուգ 139 Բաբերդ 140
Խազդիւղ	119	
95 Ռուբէն Պուլիուրեան Բ Պ 96 Նիկողոս Թիւրպէնտճեան Բ 2 97 Նշան Փափաղեան Բ 98 99 100		

ԱՁԳ-ԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԴՍՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւ-դէր
2.	»	Սիմէոն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Խղմիրլեան	
4.	»	Գարեգին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւ-դէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փափաղեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	ԳՏյ.	Միրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուքիաս	»	Ստեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհրիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

ԱՆԴՍՄՔ ՔԱՂԱՔՕԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Ալնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվաղեան	Տօք. Նշան	»	Բ. Արեւ-դէր
3.	Գըլըճճըեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւ-դէր
5.	Խըրըրեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հաղարեան	Կարապետ	»	
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Արեւ-դէր
9.	Մարսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարսճեան	Գէորգ	»	
13.	Փէշաիմալճեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Քիւրքճիխանլեան	Կարապետ	»	

ԳՆՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿՍՏԱՆԻ ԳՆՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՕՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. — Ատենական գործողութիւնք .
1. — Բացակայութիւն .
 2. — Երեսփոխանական հրատարակիր Յ. Լ. Ֆ. Ազնաւորեանի .
 3. — Երեսփոխանական ընտրութիւնք Օրթաղիւղ, Իւսկիւտար Ս. Կարապետ եւ Գուճ-Գաբուի Միացեալ-Թաղից .
 4. — Տեղեկագիր Ս. Պատրիարք Լոր յաղագս հրամարականաց Քաղի ժողովոյ նորընտիր անդամոց .
- Բ. — Տեղեկագիր Եւմտական Յանձնաժողովոյ (Մրաքիւր Կեդր. Ուղղակի տրոց եւ Եւմտացւոց 1885-86 ամի Աղջային Կեդր. Սնտուկի .
- Բ. — Առաջարկութիւն Ազգ. Վարչութեան յաղագս Երուսաղէմայ պարտուց բարձման խնդրոյ .

Գ. Բացակայք

